Մեքենանամաների և սարք. ընթացիկ նորոգում և պահպանում	1000.0		939.7		94.0	0.1
Տեղեկատվական ծառ. գծով ծախս	4080.0		4075.3		99.9	0.4
Ներկայացուցչ. ծախսեր	2000.0		1950.0		97.5	0.2
Այլ հարկեր, պարտադիր վճարներ	7600.0		7269.2		95.6	0.7
Այլ ծախսեր	27800.0		27625.4		99.4	2.7
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը Ծ Ա Խ Ս Ե Ր	1026851.0	453851.0	1020361.4	448588.1	99.4	100.0



2018 -19 ուս տարվա ուսման վարձի գծով գեղչեր

Ֆակուլտետ	ուսանողների թիվ	Ձեռքի գումարը / դրամ/
Բակալավրիատ		
Բանասիրական	36	3563750
Բնագիտական	15	1456000
Տնտեսագիտության	11	2598750
Պատմության և իրավագիտության	12	2208750
Մանկավարժության և սպորտի	18	1782000
ԸՆԴԱՄԵՆԸ	92	11609250
Մագիստրատուրա		
Բանասիրական	3	146250
Բնագիտական	1	62500
Տնտեսագիտության	5	837500
Պատմության և իրավագիտության	4	325000
Մանկավարժության և սպորտի		37500
ԸՆԴԱՄԵՆԸ	13	1408750
Ընդամենը ԱրԴՀ-ի գեղչ		
Ընդամենը ԼՂՀ կառավարության N 66 առ 14,02,2008թև N 745-Ն առ 13,11,2009 թ. որոշումների ԿԳՆ ցուցակի համաձայն	12	1012500
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	117	14030500

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Մահակյան Գեորգի Հրանտի, ֆիզմաթ.գ.թ., դոցենտ

Հիմնական գործառնություններ

1. բակալավրիատի որոշ կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերամշակման գործընթացի կազմակերպում.
2. ուսումնական գործունեության օրացույցի մշակում և վերահսկում.
3. դասախոսների ծանրաբեռնվածությունների հաստատում և կատարման վերահսկում.
4. ֆակուլտետների դեկանատներին և ամբիոններին մեթոդական օգնության ցուցաբերում.
5. ուսումնական գործընթացի փաստաթղթային գործունեության վերահսկում.
6. ընթացիկ և եզրափակիչ ստուգումների անցկացման վերահսկում.
7. պետական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում.
8. ուսումնական, արտադրական և մանկավարժական փորձուսուցումների անցկացման ժամկետների հաստատում.
9. փորձուսուցման մեթոդական աջակցության, մանկավարժական փորձուսուցման կազմակերպման ուղեցույցերի և մանկավարժական փորձուսուցման ծրագրի մշակում, արտադրական և մանկավարժական փորձուսուցման նկարագրերի մշակում.
10. ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացման գործընթացի շարունակում.
11. ամբիոնների և ֆակուլտետների աշխատանքային պլանների հաստատում.
12. ավարտական աշխատանքների թեմաների ստուգում և համապատասխանեցում դրանց ներկայացվող պահանջներին.
13. ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում.
14. ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում.
15. հանդիպում ամբիոնների հետ կապված ինստիտուցիոնալ և կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

2018-2019 ուսումնական տարում կազմակերպվել է հանդիպումներ դեկանների, ամբիոնների վարիչների և ուսանողների հետ, քննարկվել նրանց կողմից ներկայացված առաջարկությունները գործող ուսումնական պլանների վերաբերյալ: Դրանց հիմքով վերամշակվել է ուսումնական պլանները, հաստատվել բոլոր մասնագիտությունների բակալավրիատի ու մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Ուսումնական աշխատանքների կանոնավոր ընթացքն ապահովելու նպատակով իրականացվել են ուսումնական գործընթացին վերաբերող անհրաժեշտ կանոնակարգերի և փաստաթղթերի մշակում, որոնք քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետների նիստերում, գիտական խորհուրդներում:

Շարունակվել են աշխատանքները առկա և հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի որակը և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

2018-2019 ուսումնական տարում համալսարանում շարունակվել է կրեդիտային ուսուցման գործընթացում կիրառվող՝ ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային եղանակի գործընթացը: Շարունակվել են աշխատանքները թեստային առաջադրանքների մշակման, կազմման և համակարգչային բազա մտցնելու ուղղությամբ:

Այս ամենին զուգընթաց անհրաժեշտ է նշել, որ դեռ կան անելիքներ թերություններն ու խոչընդոտները հաղթահարելու համար:

Պարբերաբար ստուգվել և քննարկվել են ընթացիկ և եզրափակիչ ստուգումների արդյունքները:

Հաստատվել են փորձուսուցման անցկացման ծրագրերը և ժամկետները: Հստակեցվել են փորձուսուցման անցկացման բազային դպրոցներն ու հիմնարկությունները:

Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքներ շարունակվեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ: Իրականացվել է դասախոսների ծանրաբեռնվածության բաշխման գործընթացը և կատարման վերահսկումը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս ուսումնական տարում շարունակվել է ամբիոնների համալրումը երիտասարդ մասնագետներով:

Կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվել են դասախոսությունների և գործնական պարապմունքների որակի բարձրացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կրեդիտային համակարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

Կազմվել և հաստատվել են օպտիմալ ժամանակացույցեր 2018-2019 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար: Քննարկվել և ամփոփվել են 2018-2019 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն շարունակվել է կապը ՀՀ և ՌԴ առաջատար բուհերի հետ: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ընդլայնվել է հրավիրվող դասախոսների թիվը որոշ դասընթացների և on-line ռեժիմով դասախոսությունների անցկացման համար:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ**

Ավանեսյան Վալերի Միքայելի, պ.գ.դ, ԱրՊՀ պրոֆեսոր

2018-2019 ուսումնական տարում ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում իրականացված աշխատանքներն են.

- համակարգվել են բոլոր ֆակուլտետների գիտահետազոտական աշխատանքները.
- վերահսկվել են գիտական ամսագրերի, գիտական գրադարանի և հրատարակչության աշխատանքները.
- խթանվել է ուսումնական գործընթացում գիտական արդյունքների ներգրավումը.
- շարունակվել է համալսարանի գիտական համագործակցության խթանման գործընթացը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ.
- ապահովվել է համալսարանի միջազգային գործունեության կայուն զարգացումը՝ համալսարանի նպատակներին և ռազմավարությանը համապատասխան.
- կազմակերպվել է միջազգային համագործակցության համաձայնագրերի կնքումը և վերահսկվել դրանց կատարման գործընթացը.
- ապահովվել է գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, ռեկտորի հանձնարարականների կատարումը գիտական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ.
- աշխատանքներ են տարվել «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» պարբերականի որակի բարձրացման ուղղությամբ.
- աշխատանքներ են տարվել միջազգային կազմակերպություններում և ծրագրերում ուսանողների ներգրավման ուղղությամբ.
- իրականացվել է ամառային ճամբարի շրջանակում օտարերկրյա ուսանողների ներգրավման և մասնակցության գործընթացը.
- ցուցաբերվել է ակտիվ մասնակցություն ամբիոններում անցկացվող ասպիրանտների և հայցորդների ամենամյա որակավորումներին, հաշվետվություններին, ատենախոսություններին քննարկումներին.

2018- 2019 ուսումնական տարում ԱրՊՀ կնքել է համագործակցության երկու միջազգային պայմանագրեր՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի և Ռյազանի պոլիտեխնիկ /Ռոսկվայի պոլիտեխնիկ ինստիտուտի բաժանմունք/ ինստիտուտի հետ:

Գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր է գիտական հետազոտողի ինստիտուտի կայացումը: 2018-2019 ուսումնական տարում ասպիրանտուրա է ընդունվել 3 շրջանավարտ: Ատեստավորվել են 6 ասպիրանտներ և 6 հայցորդներ:

Կազմակերպվել և իրականացվել են հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված պարտադիր և ընտրովի հետևյալ դասընթացները.

«Օտար լեզու», «Գիտության փիլիսոփայություն», «Հոգեբանություն», «Մանկավարժություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ»:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի հինգ ֆակուլտետներում անց են կացվել գիտական սեմինարներ, ընթերցումներ և քննարկումներ: Տպագրվել են մենագրություններ, մեթոդական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական հոդվածներ: Հրատարակվել են նաև «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» (հասարակական և բնագիտական ուղղություններով) հանդեսը:

2019թ. հունիս ամսում լույս են ընծայվել բնական գիտությունների գծով 19, հասարակական գիտությունների գծով՝ 43 աշխատանքներ: ԱրՊՀ տասնյակ դասախոսներ և ուսանողներ գիտական զեկուցումներով հանդես են եկել ՀՀ-ում և արտերկրում տեղի ունեցած մի շարք գիտաժողովներում:

Հաշվետու տարում ԱրՊՀ-ում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

2018թ. սեպտեմբերի 13-ին կայացել է հանդիպում Լայպցիգի համալսարանի Գ.Վ. Լայբնիցի անվան Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի ինստիտուտի փոխտնօրեն Շտեֆան Թրյոբսթի գլխավորությամբ:

2018թ. սեպտեմբերի 17-ին բացվել է ռուս գրող, հրապարակախոս Անդրեյ Նույկինի անունը կրող կաբինետ: Միջոցառմանը ներկա էր Ա.Նույկինի որդի Պավել Նույկինը:

2018թ. սեպտեմբերի 25-ին հերթական այցով ԱրՊՀ-ում էր Քլինգենդալ համալսարանի պրոֆեսոր, Իսպանիայի միջազգային քոլեջի դասախոս, անկախ փորձագետ, միջազգային դիվանագիտական շրջանակներում ճանաչված մասնագետ Շոն Ռիորդանը:

2018թ. հոկտեմբերի 25-ին Ստեֆանակերտի երիտասարդության պալատում կայացել է Նյու-Յորքի Մանհեթենիլ քոլեջի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան, փիլիսոփայության պրոֆեսոր Շվոն Նաշ-Մարշալի «Հայրերի մեղքը» գրքի շնորհանդեսը, որին մասնակցել են ներկայացուցիչներ ԱրՊՀ-ից՝ ռեկտոր Ա.Սարգսյանի գլխավորությամբ: Գիրքը տպագրվել է ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

2018թ. նոյեմբերի 14-ին կայացել է հանդիպում Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոսյանի և Հայագիտական հանդեսի պատասխանատու քարտուղար Անդրանիկ Դաքեայանի հետ:

2018թ. նոյեմբերի 23-ին կայացել է հանդիպում ոչ ֆորմալ կրթության շրջանակներում Լիտվայի սոցիոլոգիայի դոկտոր Ռասա Ալիսաուսկենեի հետ:

2019թ. հունվարի 31-ին կայացել է հանդիպում Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի աշխատակիցների հետ:

2019թ. փետրվարի 13-ին կայացել է հանդիպում գրող, հրապարակախոս, հասարակական և քաղաքական գործիչ Ջորի Բալայանի հետ: Քննարկվել են ուսումնական գործընթացին առնչվող հարցեր:

2019թ. փետրվարի 20-ին կայացել է հանդիպում բարեգործական ֆոնդի նախագահ Վահրամ Մկրտչյանի հետ:

2019թ. մարտի 13-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել տ.գ.դ., պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը՝ «ՀՀ տնտեսության մարտահրավերները՝ տնտեսական անվտանգության համատեքստում» թեմայով:

2019թ. մարտի 20-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել կ.գ.դ. պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպոսյանը:

2019թ. ապրիլի 12-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել գրող, կինոգետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Մուրադյանը՝ «Ժամանակակից հայկական արվեստը»:

2019թ. ապրիլի 12-ին ԱրՊՀ-ում ՀՀ ԱԺ պատգամավոր, իրավաբան Նիկոլայ Բաղդասարյանը հանդիպել է պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ՝ հանդես գալով «Արդարադատությունը անցումային ժամանակահատվածում» թեմայով դասախոսությամբ:

2019թ. ապրիլի 15-18-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էռնեստ Գրիգորյանը և հանդես եկել դասախոսությամբ:

2019թ. հունիսի 3-ին ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիայի» կողմից կազմակերպված միջազգային առցանց կոնֆերանսին, որի աշխատանքները համակարգում էր ասոցիացիայի նախագահ Ստեփան Բորդանի Բերիլը: Կոնֆերանսին մասնակցում էին ասոցիացիայի անդամ երկրների՝ Աբխազիայի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության, Հարավային Օսիայի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական համալսարանները:

2019թ. հունիսի 13-ին ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիայի» նախաձեռնությամբ կազմակերպված «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները արդի շրջանում» խորագրով միջազգային առցանց գիտաժողովին:

2019թ. հունիսի 13-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել քաղաքագետ Հրաչյա Արզումանյանը:

2019թ. հունիսի 25-ին ԱրՊՀ են այցելել Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը: Կովկասի ինստիտուտի գիտաշխատող Գոռ Պետրոսյանը հանդես է եկել «Ժողովրդավարության ծագումը և վերափոխումները» թեմայով դասախոսությամբ:

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ**
Յարամիշյան Վիտյա Բենիկի, հ.գ.թ., դոցենտ

Արցախի մայր բուհում ուսանողների հետ տարվող աշխատանքներն իրականացվում են նորօրյա պահանջներին համապատասխան՝ ուսանողամետ և ուսանողակենտրոն սկզբունքով՝ կարևորելով նրանց իրավունքների պաշտպանվածության, ինքնակազմակերպման, ինքնավարության, համալսարանի կառավարման գործընթացում ներգրավվածության, ակտիվության և նախաձեռնողականության վրա: Համալսարանում ձևավորված են և հաջողությամբ գործում են ինչպես ուսանողների հետ տարվող աշխատանքների ցանցային համակարգը, այնպես էլ ուսանողական ինքնավար կառույցները՝ ուսանողական խորհուրդները, ակումբները, ակտիվը: Ներդրված են և բարձր արդյունավետությամբ իրականացվում են ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, միջբուհական, հանրապետական ու միջազգային գիտաժողովներն ու ֆորումները, ամառային ճամբարներն ու դպրոցները, վրանային բանակումները:

2018-2019թթ. ուստարում ևս ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքներն իրականացվել են նպատակային, պլանային, համակարգված և հետևողական, ինչի շնորհիվ ամրապնդվել են նախկինում գրանցած հաջողությունները, ստեղծվել են նոր հնարավորություններ՝ ոլորտի հետագա զարգացման համար: Ուսումնական տարին նախորդներից առանձնացել է նրանով, որ իրականացվել են հիմնականում այն ծրագրերը, որոնք նախատեսված են եղել հանրային նշանակության միջոցառումների պլանով և հիմնված են եղել երկու կարևոր նպատակների՝ ԱրՊՀ միջազգային ինստիտուցիոնալ համավատարմագրման և գործունեության 50-ամյա տարեդարձին նվիրված միջոցառումների պատշաճ կազմակերպման ու իրականացման ծրագրերի վրա: Հաշվի են առնվել օբյեկտիվորեն առաջացած դժվարությունները, մասնավորապես ԱրՊՀ հիմնական մասնաշենքի հիմնանորոգման հետ կապված ուսումնական պարապմունքների կազմակերպման երկհերթ բնույթը և լսարանային սուղ պայմանների ու դահլիճների սակավության հետ կապված խնդիրները: Այս առանձնահատկություններով պայմանավորված՝ համալսարանի ղեկավարության կողմից տարվա սկզբին որդեգրվել է նոր քաղաքականություն. ուսանողական աշխատանքների կազմակերպման ժամանակ առավելությունը տալ ինչպես ապակենտրոնացված, այնպես էլ արտագնա միջոցառումներին՝ դրանք կազմակերպելով կա'մ ստորաբաժանումներում՝ համեմատաբար փոքր ընդգրկումով, կա'մ մեծ ընդգրկումով, բայց համալսարանից դուրս՝ համագործակցող կազմակերպություններում՝ պահպանելով միջոցառումների կազմակերպման բարձր հաճախականությունը, հիմնական ուշադրությունը դարձնելով դրանց գաղափարական ու դաստիարակչական ուղղվածության վրա: Ստեղծված իրավիճակը մենք դիտարկել ենք ոչ թե որպես խոչընդոտ, այլ որպես նոր հնարավորություն՝ աշխատանքի նորանոր ուղղություններ ձևավորելու համար: Կարևոր քայլեր ենք ձեռնարկել հավատարմագրման պահանջներից բխող նոր սկզբունքների ներդրման ուղղությամբ՝ զուգահեռաբար բարձրացնելով ուսանողների պատասխանատվության չափաբաժինը և ներգրավվածությունը համալսարանի կառավարման գործընթացներում: Այդ նպատակին նպաստել են նաև ընթացիկ ուսումնական տարվանից ԱրՊՀ-ում գործող կառուցվածքային նոր ստորաբաժանումները՝ հանրային կապերի և լրատվության բաժինը, որն ունի համալսարանի մասին օբյեկտիվ տեղեկատվության տարածման կարևորագույն գործառնություն, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժինը (բաժնի պետ՝ Կարեն Մեժլումյան), որը ստանձնել է շրջանավարտների և գործատուների հետ տարվող աշխատանքները համակարգելու գործառնությունները, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման գործում կատարված նմանատիպ փոփոխությունները: Համալսարանի կառավարման գործում կատարված մի շարք այլ նորամուծությունների արդյունքում ուսումնական տարվա սկիզբը կրկին հագեցած է եղել տարաբնույթ միջոցառումներով: Տարվա ընթացքում միջոցառումների կազմակերպման բարձր խտությունը պահպանվել է՝ որոշ դեպքերում ստանալով համապետական ու համահայկական

հնչեղություն: Այդպիսի ծրագրերից մեկն էր ամառային միջազգային ճամբարը՝ Պատարա գետի հովտում:

Համահայկական կրթական դաշտում բարձրացել է ԱրՊՀ ճանաչվածությունը, ինչի մասին են վկայում տասնյակ պետական ու քաղաքական գործիչների, գիտության ու գործարար աշխարհի հեղինակավոր ներկայացուցիչների բազում այցելություններն են կարդացված դասախոսությունների քանակը համալսարանում: Հետևողականորեն ամրապնդվել է համագործակցային կապերի ամրապնդումը գործընկեր բուհերի, այդ թվում՝ Բելյուսի Հայկազյան համալսարանի հետ: Ուստարվա ընթացքում ԱրՊՀ ուսանողների հետ հանդիպումներ են ունեցել ինչպես հայազգի պետական, քաղաքական, ռազմական, մշակույթի ու գիտության, այնպես էլ արտերկրի ճանաչված գործիչներ:

ԱրՊՀ-ն շարունակել է գտնվել երկրի իշխանությունների հոգածության ներքո: ԱՀ նախագահ Բ.Սահակյանն իր նստավայրում ընդունել և գերազանցության դիպլոմներ, արժեքավոր նվերներ է հանձնել բակալավրիատը գերազանցությամբ ավարտած շրջանավարտերին, իսկ ԱԺ նախագահ Ա.Ղուլյանը, պետական նախարար Գ.Մարտիրոսյանը և կառավարության անդամներն ու ԱԺ պատգամավորները հանդիպումներ են ունեցել ուսանողների և դասախոսների հետ: Մագիստրոսների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը կազմակերպվել է ԱրՊՀ-ում:

Տարվա ընթացքում փաստացի ավարտին է հասցվել ՌԻՀՏԱ, մասնավորապես՝ ֆակուլտետների մեթոդիստների և կուրսղեկների գործունե համակարգի ձևավորումը: Նրանց և ՌԻՀՏԱ և Կ բաժնի ջանքերով կազմակերպվել և անց են կացվել ռեկտորի և պրոռեկտորների հանդիպումներն ուսանողական ակտիվների, կուրսերի և խմբերի ավագների հետ, «Տարվա լավագույն ուսանող» մրցույթը, ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը և այլն: ԱրՊՀ-ում լայն թափ է ստացել ինտելեկտուալ շարժումը, որի շրջանակներում խաղ-մրցույթներ են անցկացվել բոլոր ֆակուլտետներում և ամբիոններում, ուսանողական հանրակացարանում, ՊԲ գործամասերում, հանրակրթական դպրոցներում՝ նվիրված Հայրենիքի պաշտպանի օրվան, Մայիսյան եռատոնին ևն:

Ուսումնական տարին աչքի է ընկել նաև ուսանողական աշխատանքների բնագավառում նորույթ հանդիսացող ուղղությունների ներդրումով: Միջոցառումների մեծ մասը եղել է ուսանողական գիտաժողով, գիտական ընթերցում, սեմինար, կլոր սեղան: Աննախադեպ նորարարական երևույթ կարելի է համարել ուսանողի միջազգային օրվան նվիրված մրցույթների և տարաբնույթ միջոցառումների շարքը, որոնց արձագանքները տարածվել են բուհի սահմաններից դուրս:

Ուսումնական տարվա ընթացքում ակտիվորեն գործել են ուսանողների ընդգրկմամբ գործող գիտապրակտիկ կառույցները՝ հոգեբանական կենտրոնը և իրավաբանական կլինիկան, որոնք տարաբնույթ ծառայություններ են մատուցել այցելուներին՝ կազմակերպելով պրակտիկ սեմինարներ, դասընթացներ՝ ուսանողների և բնագավառի մասնագետների համար: Հոգեբանական կենտրոնի աջակցությամբ ուսանողական խմբերը պարբերաբար այցելել են Շուշիի Շող համայնքահեն կենտրոն, հոգեբանամանկավարժական և սոցիալական աշխատանքներ կատարել երեխաների հետ և արձանագրել դրական արդյունքներ, արժանացել հավաստագրերի ու շնորհակալագրերի:

Ուսանողական ամառը նույնպես արդյունավետ է եղել: Զգալի թվով ուսանողների փորձուսուցումը համատեղվել է նրանց հանգստի հետ՝ Պատարայի ճամբարում, որին մասնակցել են նաև գործընկեր բուհերի տասնյակ ուսանողներ, այդ թվում՝ արտերկրից: Ուսանողները մասնակցել են այլ բուհերի ամառային դպրոցներին (Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի Աղավնաձորի միջազգային ճամբար, ՄԵՀԶ նախարարության կազմակերպած ֆորում): ԱրՊՀ-ում կամավորական շարժման մշակույթի ձևավորման աշխատանքներին մեծապես նպաստել են ինչպես այդ ուղղությամբ կատարված նպատակային բացատրական աշխատանքները, այնպես էլ 2019թ. ամառային ամիսներին մեր երկրում կազմակերպված Համահայկական խաղերի բացման արարողության և չճանաչված երկրների ֆուտբոլի առաջնության անցկացումը:

Հետևողական աշխատանքի արդյունքում հաջողվել է հանրային կապերն ու հասարակայնության հետ տարվող աշխատանքները կազմակերպել այնպես, որ ԱրՊՀ-ում իրակա-

նացվող տարաբնույթ աշխատանքներին հնարավոր լինի լիարժեք տեղեկանալ հանրային կապերի և լրատվության բաժնի կողմից կառավարվող և սահմանված պարբերականությամբ տպագրվող «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական թերթի էջերում, asu.am պաշտոնական կայքէջում տեղադրված հարյուրավոր հրապարակումներից՝ ռուսերեն և անգլերեն թարգմանություններով: ԱրՊՀ ներքին և արտաքին կյանքը լայնորեն լուսաբանված է նաև սոցիալական ցանցերում, հանրապետության ամենատարբեր լրատվամիջոցների, այդ թվում՝ հանրային հեռուստատեսության միջոցով տարածվող բազմաթիվ նյութերում:

Համալսարանական և արտահամալսարանական միջոցառումների կազմակերպման ուղղությամբ ներդրված ռեսուրսը, կատարված լայնածավալ աշխատանքը և գրանցված արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ ԱրՊՀ-ն պատվով է կատարում ոչ միայն բարձր գիտելիքներով ու մասնագիտական կարողություններով, այլև երկրի ներկայի ու ապագայի նկատմամբ պատասխանատվություն կրող քաղաքացու ձևավորման առաքելությունը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Ավետիսյան Ռուսլան Բորիկի

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, այս տարին ևս նշանավորվել է նոր ձեռքբերումներով: Շարունակվել են համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացման ու մասնաշենքերի ընթացիկ նորոգման աշխատանքները:

Ուսանողների կեցության պայմանները բարելավելու նպատակով, 2018թ. դեկտեմբերից սկսած, հանրակացարանի 2-րդ մուտքի 5-րդ հարկի երկու մասնաբաժինների և միջանցքների վերանորոգման աշխատանքները ավարտին են հասցվել, 2019թ. ապրիլ-հուլիս ամիսներին վերանորոգվել են 2-րդ մուտքի 4-րդ հարկի երկու մասնաբաժիններն ու միջանցքները:

2019թ. ընթացիկ վերանորոգումներ են իրականացվել բոլոր մասնաշենքերի լսարաններում, աշխատասենյակներում, միջանցքներում, պահակակետերում, կաթսայատներում, տանիքներում, նկուղներում:

2019թ. ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում լրիվությամբ վերակառուցվել է հանրակացարանի 4-րդ և 5-րդ հարկերի ջեռուցման համակարգը և վերանորոգվել մնացած մասը:

Աշխատանքներ են իրականացվել սեփական ջեռուցման ցանցի և կաթսայի նորոգման, կաթսայատան անխափան աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Բոլոր մասնաշենքերում մասնակի փոխվել են պատուհանների ապակիները:

Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամի և այլ դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմամբ «Կենսաբանության արդիականացում Արցախում» ծրագրով ձեռք է բերվել 1350.0 հազ. դրամի լաբորատոր սարքավորումներ, «ԱրՊՀ ուսումնական տպարանի հիմնադրման» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 9250.0 հազ. դրամի սարքավորումներ, «Առողջ բնակիչ, որակյալ մասնագետ» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 200.0 հազ. դրամի համակարգչային տեխնիկա:

2018-2019 ուսումնական տարում ձեռք է բերվել նաև 9038600.0 դրամի կահույք, 413139.0 դրամ արժողությամբ դեղորայք:

ԱրՊՀ ամառային ճամբար կազմակերպելու նպատակով 2019թ. հուլիս ամսում ԱՀ Ասկերանի շրջանի Պատարա համայնքի վարչական տարածքում ձեռք է բերվել 0.873 հա տարածք և հետագա ամիսներին իրականացվել են տարածքի մաքրման և հարթեցման, ցանկապատի, էլեկտրաէներգիայի և ջրային գծերի շինարարության, խոհանոցի և հովանոցի շինարարության նախապատրաստական աշխատանքներ:

Անձնակազմի սպասարկման բաժնի միջոցով մշտական աշխատանքներ են տարվում համալսարանի մաքրության, սանիտարահիգիենիկ վիճակի, կարգուկանոնի պահպանության և բակի ու պարտեզների բարեկարգման ուղղությամբ:

2019թ. ընթացքում ԱրՊՀ հյուրասենյակի ծառայությունից օգտվել է 82 անձ, և կեցության օրերը կազմել են 336 օր, ինչը 2018թ. համեմատ նվազել է 45 մարդով, բայց հյուրասենյակի ծառայություններից օգտվածների թիվը աճել է 18-ով՝ անցյալ տարվա 314 օրվա համեմատությամբ:

2019թ. օգոստոսի 3-6-ն ընկած ժամանակահատվածում ԱրՊՀ հանրակացարանում հյուրընկալվել է համահայկական խաղերի 115 մասնակից:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մարգարյան Գայանե Գեորգիի, կ.գ.թ., դոցենտ

2018-2019 ուսումնական տարում ԱրՊՀ-ում հրավիրվել է գիտական խորհրդի թվով 12 նիստ և քննարկվել օրակարգային 77 հարց, որից 18-ը՝ կանոնակարգային: Համալսարանում կատարվող կանոնակարգային փոփոխությունները, նոր կարգերի մշակումը, ընդունումը և կիրառումը միտված էին ուսումնագիտական գործունեության բարելավմանը: Գիտխորհրդի կողմից ընդունված բոլոր որոշումները հասանելի էին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին:

Համալսարանի /2018-2019թթ./ զարգացման ծրագրի շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնավարման ժամկետների ավարտամբ պայմանավորված՝ կազմակերպվել են ամբիոնի վարիչների և դեկանների ընտրություններ և վերընտրություններ, համակարգվել դրանց ընթացակարգն ու արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում ԱրՊՀ-ում 3 անգամ հայտարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների մրցույթ, ըստ որի՝ կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ՝ ավագ դասախոսի, դոցենտի և պրոֆեսորի թափուր պաշտոնների համար:

2018-2019 ուսումնական տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը համալսարանի ստորաբաժանումների և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի հետ: Դոցենտի գիտական կոչումները հաստատելու, ինչպես նաև համապատասխան դիպլոմներով ամրագրելու նպատակով ՀՀ ԲՈԿ է ներկայացվել 4 հայտ: Ներկայացված բոլոր հայտերը բավարարվել են, և հայտատուների գիտական կոչումները հաստատվել ու ամրագրվել են դիպլոմներով:

Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի զարգացման գործում ունեցած ավանդի և ծննդյան 75-ամյակի կապակցությամբ Բ.Գ.Դ., պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանին գիտխորհրդի որոշմամբ շնորհվել է ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

Արցախի պետական համալսարանի զարգացման գործում ունեցած ավանդի համար ԱՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ, ԱրՊՀ նախկին ռեկտոր Մ.Մ. Մինասյանը պարգևատրվել է «ԱրՊՀ Ոսկե մեդալ»-ով:

Տպագրության է երաշխավորվել «ԱրՊՀ գիտական տեղեկագրի»/բնական և հասարակական գիտություններ/ հերթական պրակները և «Հայագիտական ուսումնասիրություն» գիտական հոդվածների ժողովածուն: Գիտական խորհրդի կողմից երաշխավորվել են շուրջ երկու տասնյակ գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեությունը խթանելուն ուղղված աշխատանքները: Հաստատվել են հայցորդների և ասպիրանտների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները:

Ակտիվ և թափանցիկ էր ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող մշտական հանձնաժողովների աշխատանքը, դրանց ծրագրերը և հաշվետվությունները կիսամյակային կտրվածքով հաստատվել են գիտխորհրդում: Գիտխորհրդի նիստերում պարբերաբար ներկայացվել են նաև ամբիոնների վարիչների, ինչպես նաև գրադարանի վարիչի տարեկան հաշվետվությունները:

ԱրՊՀ մի շարք դասախոսներ և ուսանողներ ներգրավված էին ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեի և ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից ֆինանսավորվող գիտական թեմաների կատարման խմբերում:

Կատարված աշխատանքները միտված էին համալսարանի գիտական ներուժի բացահայտմանը և գիտական մտքի ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Մրցութային հանձնաժողով

2018-2019 ուսումնական տարում ԱրՊՀ-ն հայտարարել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների մրցույթ, որի հիման վրա կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ. 7-ը՝ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար, 11-ը՝ դոցենտի թափուր պաշտոնի:

ԱրՊՀ-ում գործող ընթացակարգերի համաձայն՝ մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաթեթների վերաբերյալ մրցութային հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում ուսումնասիրվել և տրվել է եզրակացություն:

Ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողով

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպել է գիտխորհրդում հաստատված աշխատանքային պլանի համաձայն: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել, տարբեր հանձնաժողովներում քննարկվել և գիտխորհրդի հաստատման են ներկայացվել՝

ԱրՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը.

ԱրՊՀ կրթական ծրագրի կառուցվածքը.

ԱրՊՀ դասընթացի մոդուլի մասնագրի նմուշը.

ԱրՊՀ դասընթացի նկարագրի նմուշը.

ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցը.

ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական գործընթացի վերասկզբի բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի սպասարկման բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ հանրային կապերի և լրատվության բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի կանոնադրությունը.

ԱրՊՀ ՊՈԱԿ բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների փորձուսուցման կազմակերպման և անցկացման կանոնակարգը:

Միաժամանակ փոփոխություններ և լրացումներ են կատարվել գիտական խորհրդի նախկին որոշումներով հաստատված մի շարք կարգերում և կանոնակարգերում:

Հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել բոլոր կանոնակարգային փոփոխությունները գործող կարգերի մեջ խմբագրելու ուղղությամբ:

Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում կազմակերպվել է գրավոր հարցում՝ ստորաբաժանման գործունեությունը կարգավորող նոր կարգերի, կանոնադրությունների մշակման, ինչպես նաև գործունեությունը կարգավորող փաստաթղթերում փոփոխությունների անհրաժեշտության ուղղությամբ: Ստացված առաջարկությունները քննարկվել են հանձնաժողովի նիստերում:

Ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողով

Քննարկվել են ԱրՊՀ գիտխորհրդի հաստատմանը ներկայացվող ուսումնամեթոդական աշխատանքներին առնչվող ներքին իրավական ակտերի նախագծերը.

Դրական եզրակացություն է տրվել գիտխորհրդի երաշխավորությանը ներկայացվող 9 ուսումնամեթոդական աշխատանքների տպագրությանը:

Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով

Հաշվետու ժամանակահատվածում «Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողովի» կողմից գումարվել է տասը նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

-ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ն.Ա. Ավանեսյանի «Ցեղասպանությունը և կորուսյալ հայրենիքի գաղափարը» մենագրությունը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի նախկին հայցորդ Ն.Ռ. Դավթյանի «Պետրոս Հաճյանի կյանքը և գործը» ուսումնասիրությունը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ ֆ.մ.գ.թ., Լ.Ռ. Աբրահամյանի «Դասախոսություններ թվերի տեսությունից» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնի դասախոս կ.գ.դ., Հ.Գ. Գալստյանի «Սովորողների առողջության պահպանման հիմնախնդիր. նրա լուծման ուղիները Արցախում» մենագրությունը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ակ. Ս. Աբրահամյանի դոցենտ, Ա.Յու. Սարգսյանի «Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» գիրքը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոսների կողմից «Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի կուրսային, ավարտական աշխատանք» գիրքը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի, կենսաբանության ամբիոնի դասախոս կ.գ.թ., դոցենտ Գ.Գ. Մարգարյանի «Մշակովի որոշ ծառերի և թփերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունն Արցախում» աշխատանքը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս պ.գ.թ. Ի.Ն. Ավանեսյանի «Արցախի Հանրապետությունը 1991-2007թթ» գիրքը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի, ռոմանագերմանական ամբիոնի ավագ դասախոս մ.գ.թ. Նարինե Վաչագանի Դուրասանյանի «English for IT Students» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի, կենսաբանության ամբիոնի դասախոսներ կ.գ.թ., դոցենտ Ա.Հ.Թորոսյանի և դասախոս Գ.Ս.Բաբայանի «Կենսաբանական հասկացությունների և օրինաչափությունների ուղեցույց»-ը երաշխավորել տպագրության.

-ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի, կենսաբանության ամբիոնի դասախոսներ կ.գ.դ. Հ.Գ. Գալստյանի, ԵՊՀ դասախոսներ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Մինասյանի և կ.գ.թ., դոցենտ Ծ.Ի. Ադամյանի «Տարիքային ֆիզիոլոգիա /երեխաների, դեռահասների և պատանիների օրգանների համակարգերի բնութագիրը» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ԱրՊՀ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողով

ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող ԱրՊՀ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողովն իր գործունեությունը իրականացնում է հանձնաժողովի գործունեության աշխատակարգի և ԱրՊՀ ռազմավարական ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովի կողմից պլանավորվել և իրականացվել են՝

-ԱրՊՀ-գործատու համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում և հաստատում.

-ԱրՊՀ բոլոր ֆակուլտետներում ստեղծվել են ֆակուլտետի խորհրդին կից գործատուների հետ համագործակցության հանձնաժողովներ.

-Ապահովվել է գործատուների ներկայացուցիչների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման, հաստատման «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Հայոց լեզու և գրականություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ՄԿԾ-ներում.

-Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվել են գործատուների ներկայացուցիչներ:

Որակի ապահովման մշտական հանձնաժողով

Առաջնորդվելով 2018-2019 ուսումնական տարվա համար մշակված համապատասխան միջոցառումների պլանով՝ հանձնաժողովն իրականացրել է մի շարք աշխատանքներ:

- Ուսումնասիրվել և քննարկվել են բակալավրի կրթական ծրագրի կարգը, ինչպես նաև բոլոր հավելվածները (ուսումնական պլանների ձևաչափերը) մանկավարժական և ոչ մանկավարժական մասնագիտությունների համար:

- Քննարկվել են բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության բոլոր կետերը: Ուշադրություն է դարձվել դասընթացների՝ կրեդիտներով արտահայտված աշխատաժամափի հաշվարկմանը, պարտադիր և կամընտրական կառուցամասերի դասընթացներին հատկացվող կրեդիտներին:

- Քննարկվել են ՈԱ կենտրոնի կողմից մշակված մասնագիտական կրթական ծրագրերի մոնիթորինգի կարգը և ՄԿԾ-ների հաստատման և վերանայման կարգը ու ներկայացվել առաջարկություններ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողով

Թթ ուսումնական տարում ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողովի և թարմացված կազմը հնարավորություն է տվել նոր մոտեցումներ որդեգրելու և շարունակելու այն աշխատանքը որն իրականացվել է նախորդ տարիներին՝ Նոր մոտեցումներն առնչվում են ինչպես միջոցառումների հաճախացմանը այնպես էլ դրանց նպատակային թիրախային ուղղվածությանը որոնք որոշվել են ելնելով համալսարանի առջև դրված ռազմավարական նպատակներից ու խնդիրներից Հանձնաժողովն իր առջև խնդիր է դնում որոշելու այն հիմնական նպատակներն ու մեթոդական հիմնավորումները որոնց հիման վրա համապատասխան կառույցները կիրականացնեն այդ միջոցառումները

Այդպիսի ռազմավարական ուղղություններն են

Ուսանողամետ և ուսանողակենտրոն քաղաքականության հետևողական կենսագործումը

Ուսանողների ուսումնական և հանրային ակտիվության շարունակական բարձրացումը

Համալսարանի գրավչության նրա վարկանիշի պերմանենտ աճը

Համալսարանի հանրային պատասխանատվության շրջանակի ընդլայնումը

Այն խնդիրների իրագործումը որոնք բխում են հավատարմագրման գործընթացից

Այս տրամաբանությամբ՝ ուստարվա համար հանձնաժողովը պլանավորել է թվով միջոցառում որից երկրորդ կիսամյակի համար Նիստերը գումարվել են կիսամյակային՝ երկանգամյա պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության Դրանք արձանագրվել են, և քաղվածքները ներկայացվել գիտխորհրդի նախագահին

Պլանային միջոցառումները հիմնականում կատարվել են

Մշակվել և ներկայացվել են ԱրՊՀ միջազգային հավատարմագրման նախապատրաստվելու համար ուսանողական աշխատանքների հետ կապված առաջարկությունների փաթեթները

Ուսանողամետ ուսուցման դրույթների ներդրման նպատակով քննարկվել են ուսումնա դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հարցեր պլանավորվել և հրավիրվել է ուսանողների հանդիպում ռեկտորի հետ բարձրացված խնդիրների վերաբերյալ ընդունվել են որոշումներ

Ուղղորդվել է ուսանողական համապատասխան բաժնի ուսանողական ինքնավար կառույցների ֆակուլտետների մեթոդիստների կուրսդեկների աշխատանքը

Հունիս ամսում հրավիրվել է ուսանողական համագումար որի որոշումները ուղենշային են դարձել առաջիկա ժամանակահատվածի համար

Շարունակվել է ՀՀ առաջատար բուհերի հետ համատեղ աշխատանքը ուսանողների ամառային հանգստի կազմակերպման ուղղությամբ

Ընդլայնվել են կապերն ու համագործակցությունը ՄԵՀԶ նախարարության երիտասարդական կազմակերպությունների հետ իրագործվել են հայրենասիրական ու երիտասարդական ինչպես նաև հանրապետության դպրոցների հետ փոխգործակցության պլանով նախատեսված միջոցառումները

Արցախի Հանրապետությունում միջազգային միջոցառումների կազմակերպմամբ պայմանավորված՝ զգալի թափ է արձանագրվել երիտասարդական կամավորական շարժման

գաղափարների ներդրման և խթանման ուղղությամբ ԱրՊՀ հարյուրավոր ուսանողներ կամավորականի կարգավիճակով մասնակցել են «Կոնիֆա» և «Համահայկական խաղեր» միջազգային մրցաշարերին արժանանալով հավաստագրերի դրվատանքի

Ամրապնդվել են կապերն ու համագործակցությունը ՊԲ զորամասերի հետ կազմակերպել են այցելություններ և դասախոսություններ զորամասերում

-Աշխատանք է կատարվել ԱրՊՀ շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր միջոցառման կազմակերպման ուղղությամբ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**Դեկան՝ Մարգարյան Լուսինն Գևորգիի, ք.գ.թ., դոցենտ****Ֆակուլտետի մասնագիտությունները և կրթական ծրագրերը****Բակալավրիատ**

011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն
032101.00.6	Լրագրություն
032101.01.6	Լրագրություն
023201.00.6	Լեզվաբանություն
023201.01.6	Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)

Մագիստրատուրա

023101.00.7	Հայոց լեզու և գրականություն
023101.03.7	Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն
023101.07.7	Հայ գրականության պատմություն
032101.00.7	Լրագրություն
032101.01.7	Լրագրություն
023102.00.7	Օտար լեզու և գրականություն
023102.08.7	Ռուսաց լեզու
023102.09.7	Անգլերեն լեզու
023102.15.7	Ռուս գրականություն

Մասնագիտություն, կրթական աստիճան	Ուսանողների թիվը՝ 584									
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս		V կուրս	
	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.	անվճ.	վճ.
Բակալավրիատ. Առկա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 414)										
Հայոց լեզու և գրականություն	10	17	10	33	15	25	12	29	-	-
Լրագրություն	6	5	5	8	5	8	5	2	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	13	13	12	17	13	19	12	17	-	-
Ռուսաց լեզու և գրականություն	4	2	8	7	11	4	7	9	-	-
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ	-	-	7	6	7	9	8	14	-	-

Հեռակա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 98)										
Հայոց լեզու և գրականություն	-	12	-	10	-	22	-	12	-	11
Ռուսաց լեզու և գրականություն	-	2	-	5	-	9	-	6	-	9
Մագիստրատուրա. Առկա ուսուցման համակարգ (ուսանողների թիվը՝ 71)										
Ռուս գրականություն	4	3	3	1						
Ռուսաց լեզու	3	1	2	1						
Անգլերեն լեզու	6	3	8	3						
Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն	5	-	5	2						
Հայ գրականության պատմություն	3	4	4	1						
Լրագրություն	3	1	5	-						

Ծրջանավարտներ

Մասնագիտություն	Ծրջանավարտների թիվը՝ 170, այդ թվում՝ գերազանց՝ 32	
	Բակալավրիատ՝ 134 (գեր.դիպլոմ՝ 23)	Մագիստրատուրա՝ 35 (գեր.դիպլոմ՝ 9)
Հայոց լեզու և գրականություն	41 (4)	
Լրագրություն (ծառայություն)	8 (1)	
Ռուսաց լեզու և գրականություն	15 (2)	
Անգլերեն լեզու և գրականություն	29 (11)	
Թարգմանչական գործընկերներ և հայերեն լեզուներ	22 (5)	
Ռուսաց լեզու և գրականություն (հեռակա)	9	
Հայոց լեզու և գրականություն (հեռակա)	11	
Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն		7
Հայ գրականության պատմություն		5 (2)
Լրագրություն		5 (1)
Ռուս գրականություն		4 (3)
Ռուսաց լեզու		3
Անգլերեն լեզու		11 (3)

**Քննաշրջանների արդյունքները
Չմեռային քննաշրջան**

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնախատական ստացած ուս. թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմություն %-ով
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	28	-	3	100
2-րդ	43	2	7	95.3
3-րդ	40	-	4	100
4-րդ	41	-	-	100
Ընդամենը	152	2	14	98.7
Լրագրություն				
1-ին	11	-	-	100
2-րդ	13	-	-	100
3-րդ	13	-	-	100
4-րդ	7	-	1	100
Ընդամենը	44	-	1	100
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	6	-	-	100
2-րդ	16	-	-	100
3-րդ	15	-	-	100
4-րդ	16	-	4	100
Ընդամենը	53		4	100
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	28	-	1	100
2-րդ	29	-	1	100
3-րդ	32	-	3	100
4-րդ	29	-	3	100
Ընդամենը	118		8	100
Թարգմանչական գործ				
2-րդ	14	-	-	100
3-րդ	16	-	1	100
4-րդ	22	-	-	100
Ընդամենը	52		1	100
Մագիստրատուրա				
Անգլերեն լեզու				
1-ին	9	-	4	100
2-րդ	11	-	4	100
Ընդամենը	20		8	100
Ռուսաց լեզու				
1-ին	4	-	2	100
2-րդ	3	-		100
Ընդամենը	7		2	100
Ռուս գրականություն				

1-ին	7		1	100
2-րդ	4		4	100
Ընդամենը	11		5	100
Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն				
1-ին	5	-	1	100
2-րդ	7	-	-	100
Ընդամենը	12		1	100
Հայ գրականության պատմություն				
1-ին	7	-	1	100
2-րդ	5	-	1	100
Ընդամենը	12		2	100
Լրագրություն				
1-ին	4	-	2	100
2-րդ	5	-	1	100
Ընդամենը	9	-	3	100
Հնարավոր ուսուցման համակարգ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	13	-	-	100
2-րդ	11	1	-	90.9
3-րդ	22	-	-	100
4-րդ	15	7	-	53.3
5-րդ	11	-	-	100
Ընդամենը	72	8	-	88.9
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	2	-	-	100
2-րդ	5	-	-	88.9
3-րդ	9	1	-	100
4-րդ	6	-	-	100
5-րդ	9	-	-	100
Ընդամենը	31	1		96.8
ԸՆԴՀԱՆՈՒՐ	593	11	49	98.1

Ամառային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուս. թիվը	Գերազանցիկների թիվը	յռադասականություն %-ով
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	27	-	2	100
2-րդ	43	11	1	74.4
3-րդ	40	-	3	100

4-րդ	41	-	-	100
Ընդամենը	151	11	6	92.7
Լրագրություն				
1-ին	11	-	-	100
2-րդ	13	1	-	92.3
3-րդ	13	-	-	100
4-րդ	7	-	1	100
Ընդամենը	44	1	1	97.7
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	6	-	-	100
2-րդ	16	1	6	93,8
3-րդ	15	-	-	100
4-րդ	16	-	4	100
Ընդամենը	53	1	10	98,1
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	28	-	-	100
2-րդ	29	-	6	100
3-րդ	32	-	9	100
4-րդ	29	-	11	100
Ընդամենը	118	-	26	100
Թարգմանչական գործ				
2-րդ	14	1	-	92,9
3-րդ	16	-	2	100
4-րդ	22	-	4	100
Ընդամենը	52	1	6	98,1
Մագիստրատուրա				
Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն				
1-ին	5	-	1	100
Ընդամենը	5	-	1	100
Հայ գրականության պատմություն				
1-ին	7	-	1	100
Ընդամենը	7	-	1	100
Լրագրություն				
1-ին	4	-	2	100
Ընդամենը	4	-	2	100
Ռուսաց լեզու				
1-ին	4	-	3	100
Ընդամենը	4	-	3	100
Ռուս գրականություն				
1-ին	6	-	6	100
Ընդամենը	6	-	6	100
Անգլերեն լեզու				
1-ին	9	-	4	100
Ընդամենը	9	-	4	100
Հնդկա ուսուցման համակարգ				

Հայոց լեզու և գրականություն				
1-ին	13	3	-	76.9
2-րդ	10	1	-	90.0
3-րդ	22	2	-	90.9
4-րդ	12	2	-	83.3
5-րդ	11	-	-	100
Ընդամենը	68	8	-	88.2
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	2	-	-	100
2-րդ	5	-	-	100
3-րդ	9	1	-	88,9
4-րդ	6	-	-	100
5-րդ	9	-	-	100
Ընդամենը	31	1	-	96,8
ԸՆԴՀԱՆՈՒՐ	552	23	66	95,8

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4:

Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն Ամբիոնի վարիչ՝ Ղազարյան Հասմիկ Սուրենի, բ.գ.թ., դոցենտ

Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնում ուսումնականական ժական և գիտական աշխատանքները 2018-2019 ուսումնական տարում իրականացրել են 1 պրոֆեսոր, 10 դոցենտ, 5 ավագ դասախոս, 1 ասիստենտ՝ որպես ժամավճարային աշխատող:

1. Սարգսյան Արմեն Յուրիկի-բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
2. Բաբայան Օֆելյա Ենոքի-բ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
3. Մինասյան Սիլվա Աշոտի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
4. Յարամիշյան Միրա Բենիկի-մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
5. Մինասյան Շողեր Մառլեստի-բ.գ.թ., դոցենտ
6. Խաչատրյան Նունե Գեորգիի-բ.գ.թ., դոցենտ
7. Սաղյան Շուշանիկ Պավլիկի-բ.գ.թ., դոցենտ
8. Ավանեսյան Կարինե Համբարձումի-բ.գ.թ., դոցենտ
9. Զաքարյան Աիդա Սարգսի-մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
10. Մարգարյան Լուսինե Գեորգիի-բ.գ.թ., դոցենտ
11. Հակոբյան Կարինե Աշոտի-ավագ դասախոս
12. Պողոսյան Ժենյա Ռոմայի-ավագ դասախոս
13. Հասրաթյան Ծովինար Ալեքսանդրի-ավագ դասախոսի պաշտոնակատար
14. Սարգսյան Վեհանուշ Լևոնի-ավագ դասախոսի պաշտոնակատար
15. Հայրապետյան Լիանա Բենիկի-ավագ դասախոսի պաշտոնակատար

Ժամավճարային հիմունքով աշխատող՝

Մովսեսյան Ռենա Անդրանիկի-բ.գ.թ., ասիստենտ:

Ամբիոնն ունի մեկ ասպիրանտ՝ Արզումանյան Արմինե Վարդանի:

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 10.506 ժամ:

**Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների
ընդհանուր ուղղությունների**

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության, պատմահամեմատական քերականության, բարբառագիտության, ընդհանուր և կիրառական լեզվաբանության, խոսքի մշակույթի և ոճաբանության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

Ամբիոնի դասախոսները տպագրել են մենագրություններ, հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Հրատարակությունների ցանկ

1.Սարգսյան Ա.Յու., *Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության*, Երևան, 2019, 120 էջ:

2.Սարգսյան Ա.Յու., *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2019, 845 էջ: /լրամշակված/

3.Սարգսյան Ա.Յու., *Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության*, Երևան, 2019, 156 էջ:

4.Ղազարյան Հ.Ս., Մինասյան Շ.Մ., *Բայակազմության և բայասեռի անօրինաչափ իրողությունները ժամանակակից գրական հայերենում*, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձորի պետական համալսարան 50, Հովհաննես Թումանյան 150, Երևան, 2019, էջ 73-83:

5.Մինասյան Շ.Մ., Ղազարյան Հ.Ս., *Քերականական անօրինաչափ իրողությունները ժամանակակից հայերենի անուն խոսքի մասերի համակարգում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 1/2018, Ստեփանակերտ, էջ 19-28:

6.Բաբայան Օ.Ե., *Գրաբարը և մենք*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 1/2018, Ստեփանակերտ, էջ 10-18:

7.Բաբայան Օ.Ե., *Աշոտ Աբրահամյանը և մեր նախնյաց լեզուն*, «Հայագիտական ուսումնասիրություններ» 8/2018, Ստեփանակերտ, էջ 38-46:

8.Մինասյան Ս.Ա., *20-րդ դարի մեծ լեզվաբանը (Աշոտ Աբրահամյան -100)*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 1/2018, Ստեփանակերտ, էջ 29-35:

9.Մինասյան Ս.Ա., *-Վ, -(Ա//Ե)Ց- բայածանցներով կառույցների տիպը (Աշոտ Աբրահամյան-100)*, 1/2019, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» Ստեփանակերտ, էջ 38-49:

10.Մինասյան Ս.Ա., *Մեծատառով մարդու գեղագիտական նկարագրից մի փշրանք (Մոնթե-60, Կոմիտաս Հակոբյանի հուշերով)*, «ԱրՊՀ հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2019, էջ 56-62:

11.Մինասյան Ս.Ա., *Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը*, Ստեփանակերտ, 2019, 320 էջ:

12.Սաղյան Շ.Պ., *Ա. Աբրահամյանի ներդրումը պատմական հայերենագիտության բնագավառում (Աշոտ Աբրահամյան-100)*, 1/2019, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, էջ 59-68:

13.Հասրաթյան Ծ.Ա., *Անորոշ և համակատար դերբայների որոշ ձևերի ուսուցման հարցեր*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2019, Ստեփանակերտ, էջ 31-37:

14.Սարգսյան Վ.Լ., *Բառերի ձևախմբաստային խմբերի ուսուցումը*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2019, Ստեփանակերտ, էջ 69-77:

15.Արզումանյան Ա.Վ., *Ղարաբաղի բարբառի մի շարք սովորական դարձվածքների ծագման մշակութային հիմքերը*, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձորի պետական համալսարան 50, Հովհաննես Թումանյան 150, Երևան, 2019, էջ 8-14:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Դասախոսների կողմից գիտական սեմինարների և ընթերցումների անցկացում և քննարկում /7 գիտական սեմինար, 10 գիտական ընթերցում/:
2. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
3. Գիտական սեմինարների կազմակերպում Ստեփանակերտի բոլոր դպրոցների հայոց լեզվի և գրականության մեթոդավորումների հետ:
4. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
5. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
6. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:

Համագործակցություն

Համագործակցություն՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Գր.Նարեկացի համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողով՝ «Հայոց լեզուն անադարտ պահենք» խորագրով /1 զեկուցում/:
2. Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողով՝ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին /2 զեկուցում/:
3. «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնում կազմակերպված «Հայոց Արևելից կողմանք /Արցախ, Ուտիք/. պատմություն և մշակույթ» խորագրով միջազգային գիտաժողով /2 զեկուցում/:

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Ներաբերիչային դասալսումների անցկացում և քննարկում (8 դասալսում):
4. Փոխադարձ դասալսումների անցկացում և քննարկում (4 դասալսում):
4. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և ստուգումների ու քննությունների համար սահմանված ընթացակարգին դրանց համապատասխանելիության վերահսկում:
5. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
6. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
7. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Հուլի-միջոցառում՝ նվիրված Ա.Ա. Աբրահամյանի 100- ամյակին:
2. Հուլի-միջոցառում՝ նվիրված Ալ. Մարգարյանի 95-ամյակին:
3. Ներֆակուլտետային միջոցառում՝ նվիրված մայրենի լեզվի օրվան:
4. Շարադրությունների և ասմունքի մրցույթ՝ նվիրված մայրենի լեզվի օրվան:
5. Միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին:

6. Դաս-միջոցառում՝ ուսանողների և աշակերտների մասնակցությամբ:
7. Միջֆակուլտետային առարկայական օլիմպիադա:
8. Միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ:
9. Միջոցառումներ Հաղործի և Մարտակերտի զորամասերում՝ ուղղված բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն **Ամբիոնի վարիչ՝ Խաչատրյան Շուշան Ռոբերտի, բ.գ.թ., դոցենտ**

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2018-2019 ուսումնական տարում իրականացրել են 3 պրոֆեսոր, 6 դոցենտ, որից մեկը՝ ժամավճարային աշխատող, 4 ավագ դասախոս, 2 դասախոս և 8 ասիստենտ:

1. Խանյան Սոկրատ Աղալարի-բ.գ.դ., պրոֆեսորի պաշտոնակատար
2. Մուսայելյան Հովիկ Գաստելլոյի-բ.գ.դ., պրոֆեսորի պաշտոնակատար
3. Աթայան Անահիտ Միքայելի-բ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
4. Ավանեսյան Նարինե Արարատի-բ.գ.թ., դոցենտ
5. Խաչատրյան Միլվա Եղիշեի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
6. Բաղդասարյան Սիրուն Սարուխանի-բ.գ.թ., դոցենտ
7. Բալայան Զինաիդա Վանիկի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
8. Առաքելյան Վալյա Արտաշեսի-բ.գ.թ., ավագ դասախոս
9. Լալայան Գայանե Ստեփանի - ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Ստոնյան Զարինե Գարեգինի-բ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Աբրահամյան Օֆելյա Ներսեսի- դասախոս

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Ղուլյան Արտակ Կամոյի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
2. Գաբրիելյան Կիմ Եղիշեի-բ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
3. Ավետիսյան Հրայր Համլետի-ասիստենտ
4. Բալայան Սամվել Կիմայի-ասիստենտ
5. Բաղդյան Վարդգես Բորիսի-ասիստենտ
6. Բեգլարյան Արտակ Արտյոմի-ասիստենտ
7. Դուրյանյան Անուշ Վլադիմիրի-ասիստենտ
8. Սողոմոնյան Տաթևիկ Գառնիկի-բ.գ.թ., ասիստենտ
9. Դավթյան Նոնա Ռաֆիկի-բ.գ.թ., դասախոս
10. Պետրոսյան Մաթենիկ Վալերիի-ասիստենտ
8. Անց են կացվել ասպիրանտների և հայցորդների ամենամյա ատեստացիաները, որոնց արդյունքներով կազմվել են հրամաններ և ներկայացվել ռեկտորի հաստատմանը:

9. Կադրերի բաժին են ներկայացվել ասպիրանտների, հայցորդների գիտական ղեկավարների վարձատրման ժամաքանակների մասին ներկայացումները:

10. Ձևակերպվել և ռեկտորի հաստատմանն են ներկայացվել համապատասխան հրամաններ /ասպիրանտների և հայցորդների շարժի հետ կապված, ազատման, ակադեմիական արձակուրդից վերականգնման, կրթաթոշակների նշանակման, փոխադրման/:

11. Կազմակերպվել է հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը/համալսարանի հաշվապահության հետ համատեղ/:

12. Ստուգվել և համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացվել ասպիրանտների և հայցորդների աշխատանքային անհատական պլանները:

13. Հստ բաժանմունքների և ամբիոնների՝ տրամադրվել են բոլոր հրամանների քաղվածքները:

14. Մայիս-հունիս ամիսներին համապատասխան ամբիոններ են ուղարկվել գրություններ՝ հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական ծանրաբեռնվածությունների մասին:

15. Սահմանված կարգով ընթացքավորվել են բաժնի գործառնությունների շրջանակում ստացած դիմումները, կազմվել և տրամադրվել են անհրաժեշտ տեղեկանքներ, ասպիրանտների և հայցորդների հանձնած որակավորման ստուգաթիվ- քննությունների մասին ամփոփագրեր:

16. Համակարգվել է ասպիրանտուրայի ուսումնական գործընթացին մասնակցող ԱրՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

17. Կոորդինացվել են ամբիոնների լաբորանտների աշխատանքները ասպիրանտների և հայցորդների մասով և ցուցաբերել նրանց մեթոդական օգնություն:

18. Դեկանատների և ամբիոնների վարիչների միջոցով կազմվել է ասպիրանտուրայի ընդունելության հայտ՝ ԱՀ ԿԳՍ նախարարություն ուղարկելու համար:

19. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն, ԿԳՍ նախարարություն և այլ պետական մարմիններ են ներկայացվել տեղեկատվավիճակագրական և պահանջվող այլ տվյալներ:

20. Աշխատանք է տարվել համալսարանում կազմակերպված գիտաժողովների, աշխատաժողովների մասնակիցների կողմից ներկայացվող հոդվածների, նյութերի հավաքագրման գործընթացի ուղղությամբ:

21. Իրականացվել են աշխատանքներ ԱրՊՀ-ում կազմակերպված գիտաժողովներին ՀՀ և արտերկրների բուհեր մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

22. Կազմվել են ԱրՊՀ ընթացիկ և տարեկան հաշվետվությունները:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Մինասյան Հասմիկ Ջումշուդի, կ.գ.թ., դոցենտ

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում, համաձայն համալսարանում գործող կարգի, Որակի ապահովման կենտրոնը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար կազմակերպել է հետևյալ աշխատանքները.

Համապատասխան կարգի համաձայն՝ համակարգչային ծրագրի միջոցով իրականացվել են ԱրՊՀ ամբիոնների կողմից ներկայացված 210 ավարտական աշխատանքների և 176 մագիստրոսական թեզերի վերնագրերի և բովանդակության գրազոդության նկատմամբ վերահսկողություն (ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2019-2023թթ.) նպատակ 1-ի 2-րդ խնդրում ակադեմիական ազնվության վերաբերյալ քայլերի իրականացման ուղղությամբ): Ստուգման արդյունքում մի քանի թեմաների վերնագրեր փոփոխվել են: Համապատասխան եզրակացությունները ուղարկվել են ամբիոններ: Այժմ բազան համալրված է 2406 աշխատանքներով:

Մշտադիտարկման նպատակով կատարվել է ա) ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատմանը և բ) ուսանողի կողմից մագիստրոսական ուսուցման որակի գնահատմանն ուղղված հարցումներ՝ բոլոր ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ: Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են նախապես կազմված գրաֆիկի համաձայն համակարգչային ծրագրի միջոցով: Հարցմանը մասնակցել են բակալավրի առկա, հեռակա և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները: Հարցման արդյունքները պահպանվել են համալսարանի ներքին ինֆորմացիոն ցանցում: Այդ հարցումներին մասնակցել են 449 ուսանող, կամ բոլոր շրջանավարտների 67%-ը: Կազմակերպվել է նաև դիմորդների սոցիոլոգիական հարցում. համալսարանում կրթական ծառայությունների մատուցման արդյունավետության գնահատման (հարցաթերթերի միջոցով): Հարցմանը մասնակցել է 668 դիմորդ:

Նշված ժամանակահատվածում կենտրոնի կողմից մշակվել են՝ ա) կրթական ծրագրերի համար առարկայական նկարագրի և մասնագրի ձևաթերթերը, բ) բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրի ձևաչափը և այն լրացնելու մեթոդական ցուցումները, գ) բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության կարգը: Նշված փաստաթղթերը մշակվել են՝ ելնելով ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2019-2023թթ.) նպատակների և խնդիրների վերլուծությունից: Դրանք քննարկվել են բոլոր շահակիցների ներգրավմամբ՝ կենտրոնի կողմից կազմակերպված նիստերում և ներկայացվել են համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը: Կենտրոնի աշխատակիցները նաև ակտիվ մասնակցություն են ունեցել ԱրՊՀ 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանը և նրա պլան-ժամանակացույցի կազմմանը:

Կենտրոնի կողմից կազմակերպվել են հանդիպումներ համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների հետ: Հանդիպումների նպատակն էր՝ ծանոթացնել սովորողներին համալսարանում նախատեսված հավատարմագրման գործընթացի իրականացման, որակի ապահովման մեխանիզմների ներդրման հետ: Վերջում անց է կացվել հարցում՝ պարզելու ուսանողների իրազեկվածության աստիճանը կրեդիտային համակարգի, մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական պլանների վերաբերյալ: Ուսանողները նաև լրացրել են հարցման թերթիկներ՝ այդ միջոցառումից բավարարվածության աստիճանը պարզելու համար:

Կենտրոնը համագործակցել է ՀՀ ՈԱԱԿ-ի հետ և համակարգել ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղությամբ ծավալվող աշխատանքներում աշխատանքային խմբերի գործունեությունը: Նրանց հետ՝ ուսումնական գծով պրոռեկտորի գլխավորությամբ, կազմակերպվել են թվով 10 հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գեկույցի համար նախատեսված բոլոր չափանիշները և չափորոշիչները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Գասպարյան Գոհար Էդուարդի

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի վերահսկման բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Վերահսկվել է ուսումնական պարապմունքների իրականացման ողջ գործընթացը:
2. Պարբերաբար ստուգվել են ուսանողների հաճախումները բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

3. Իրականացվել է ամբիոնային ուսումնական բեռնվածությունների բաշխման ստուգում և կատարման վերահսկողություն:

4. Ստուգվել և համարակալվել են բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններով նախատեսված դասընթացների քննական և ստուգարքային ամփոփագրերը:

5. Վերահսկվել են դեկանատներում քննական և ստուգարքային ամփոփագրերը յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում, շտկվել անճշտություններն ու խախտումները:

6. Կազմակերպվել են բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններով նախատեսված եզրափակիչ գնահատումով դասընթացների ստուգումները /1-ին և 2-րդ փուլեր/, ավանդական քննությունների և լուծարքների հանձնումը համակարգչային եղանակով և ամփոփվել արդյունքները: 1-ին կիսամյակում՝ 392 ստուգում /6781 ուս.-քնն./, 2-րդ կիսամյակում՝ 352 ստուգում /6183 ուս.-քնն./, ավանդական՝ 69 քննություն /1093 ուս.-քնն./: Ընդհանուր առմամբ՝ 813 ստուգում /14057 ուսանող-քննություն/:

7. Կազմակերպվել է 1-ին կուրսեցիների խորհրդատվություն՝ համակարգչային եղանակով ստուգումների անցկացման վերաբերյալ:

8. Վերահսկվել է եզրափակիչ գնահատումով դասընթացների թեստերի մուտքագրման գործընթացը:

9. Իրականացվել է ուսանողների ուսման առաջադիմության ցուցանիշների /ՄՈԳ-երի/ հաշվարկման վերահսկողություն:

10. Ստուգվել է որոշ նորմատիվային փաստաթղթերի առկայությունը ամբիոններում և դեկանատներում:

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Հայրապետյան Անուշ Վաչագանի

2018-2019 ուսումնական տարում բաժինը կազմակերպել է ուսումնական պլաններով նախատեսված բակալավրի ուսումնական՝ 21, մանկավարժական՝ 26, արտադրական՝ 9 և մագիստրատուրայի գիտամանկավարժական՝ 20, ընդհանուր՝ 76 փորձուսուցում, որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմվել է ուսումնական տարվա փորձուսուցման գրաֆիկը:

2. Ամբիոնների հետ հստակեցվել են փորձուսուցման վայրերը:

3. Կնքվել են պայմանագրեր ԱՀ տարբեր գերատեսչությունների, հիմնարկ ձեռնարկությունների, բանկերի, հանրակրթական հաստատությունների հետ:

4. Փորձուսուցում մեկնող ուսանողների հետ կազմակերպվել են կողմնորոշիչ և ամփոփիչ կոնֆերանսներ, ժողովներ:

5. Կազմակերպվել են հանդիպումներ փորձուսուցման ղեկավար-մեթոդիստների հետ:

6. Վերահսկվել է փորձուսուցման ողջ գործընթացը:

7. Ներկայացվել են փորձուսուցման հետ կապված բոլոր հաշվետվությունները:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Առուշանյան Եղիշե Ջավենի

2018-2019 ուսումնական տարում հրատարակչության աշխատանքները կազմակերպվել են, համաձայն կազմված պլանի, նպատակ ունենալով ապահովել համալսարանի համար անհրաժեշտ բոլոր տեսակի դասամատյանների, արձանագրությունների մատյանների, համալսարանի աշխատանքները բնականոն կազմակերպելու համար փաստաթղթերի, տոմսերի, թեստերի, պատվոգրերի, շնորհակալագրերի, բլանկների, դիպլոմների միջուկների ձևավորումը, տպագրությունն ու պատճենահանումը:

Հրատարակչությունը կատարում է մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների ձևավորման և տպագրման, ինչպես նաև գունավոր տպագրության ու լամինապատման աշխատանքներ:

Հրատարակչությունում տպագրվել են «Արցախի համալսարան», «Քո ժամանակը» ամսաթերթերը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ)», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր (Բնական գիտություններ)» հանդեսները, «Հայագիտական ուսումնասիրություններ» հոդվածների ժողովածուի հերթական պրակը, գիտաժողովների նյութերի ժողովածուները, գիտխորհրդի կողմից հաստատված գիտական, գիտամեթոդական, ուսումնամեթոդական աշխատանքները:

Բաժնի կողմից տպագրության է պատրաստվել ԱրՊՀ հավատարմագրման համար անհրաժեշտ նյութերը, Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ժողովածուն, ուղեցույցներ, պլաններ, այլ նյութեր:

Բաժինը վերագինվել է հրատարակչության համար անհրաժեշտ ժամանակակից տպագրական և օժանդակ՝ TOSHIBA e-STUDIO 5518A, RICOH IM C2500, GPM 315, RENZ SRW360, IDEAL 4705 սարքավորումներով, որոնք կնպաստեն բարձրորակ տպագրության ամբողջական ցիկլն իրականացնելուն:

Հրատարակչությունը կատարել է նաև 1865120 դրամի վճարովի ծառայություն:

ԿԱՂԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Միքայելյան Կարինե Լևոնի

2018-2019 ուսումնական տարում բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ձևակերպվել է 304 հրաման՝ աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, աշխատանքային արձակուրդների, չվճարվող արձակուրդների, խրախուսման, պարգևատրման, տույժի, փորձուսուցման և այլնի մասին: Հրամանների քաղվածքները բաժանվել են համապատասխան ֆակուլտետների դեկանատներին, ամբիոններին և մյուս ստորաբաժանումներին, դրանց բովանդակությանը ծանոթացել են համապատասխան անձինք:

2. Կնքվել է 340 -ից ավելի աշխատանքային պայմանագիր.

3. Գրանցվել է 580-ից ավելի դիմում և ներկայացում.

4. Լրացվել է 354 տեղեկանք, 131 անաշխատունակության թերթիկ, 60 գործուղման թերթիկ.

5. Աշխատանքի է ընդունվել 25 հիմնական և 103 ժամավճարային հիմունքներով աշխատող.

6. Իրենց դիմումների համաձայն աշխատանքից ազատվել են 11, պայմանագրի ժամկետը լրանալու հետ կապված՝ 15, թոշակային տարիքի հետ կապված՝ 10 անձինք:

7. Նոր հիմնական աշխատանքի ընդունվողներից պահանջվել են աշխատանքային գրքույկներ, կատարվել գրառումներ: Գրառումներ են կատարվել նաև տարակարգերի

փոփոխման, տեղափոխությունների, աշխատանքից ազատվողների աշխատանքային գործույկներում.

8. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել տեղեկություններ համալսարանի աշխատակազմի մասին.

9. Կազմվել է աշխատողների աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Սվետլանա Վլադիմիրի Հարությունյան

2018-2019 ուսումնական տարում ԱրՊՀ ընդհանուր բաժնի փաստաթղթերի ընդունման և հաշվառման ցուցանիշներն են.

Ելից գրությունների մատյանում գրանցվել է 286 գրություն, որից փոստային առաքանու միջոցով հանրապետությունից դուրս առաքվել է 98 (փոստային առաքանու միջոցով առաքված 98 գրությունից 67-ը ուղարկվել է նաև էլեկտրոնային տարբերակով), ԱրՊՀ ցրիչի միջոցով՝ 188 գրություն:

Փոստային առաքանու միջոցով ուղարկվել է դեկանատների կողմից տրամադրված 80, ուսումնամեթոդական բաժնի կողմից 19 ծանուցագիր:

Մտից գրությունների մատյանում գրանցվել է 370, ներկայացումների, զեկուցագրերի և միջնորդագրերի մատյանում՝ 1081 գրություն, դիմումների գրանցման մատյանում՝ 2297 դիմում և ներկայացվել մակագրության ու հանձնվել համապատասխան բաժիններ:

Ըստ արխիվում պահպանված տվյալների՝ տրամադրվել է շրջանավարտների ուսումնառության տարիների՝ 31 և աշխատած տարիների վերաբերյալ՝ 23 տեղեկանք:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Վարդանյան Նարինե Եղիազարի

2018-2019 ուսումնական տարում Հայագիտական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. 2018թ.դեկտեմբերի 5-ին ԱրՊՀ հայագիտական կենտրոնի և բանասիրական ֆակուլտետի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է հուշ-ցերեկույթ՝ նվիրված ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկ Իգոր Հասրաթյանին:

2. 2019թ. մարտի 11-ին կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված արցախյան հիմնահարցին ու պետականության հռչակմանը:

3. 2019թ. մարտի 20-ին ԱրՊՀ հայագիտական կենտրոնի, պատմության և իրավագիտության ֆակուլտետի հետ համատեղ անց է կացվել գիտական ընթերցումներ՝ նվիրված 20-րդ դարի հայ ազգային ազատագրական շարժման ականավոր գործիչ Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակին:

4. 2019թ. ապրիլի 4-ին հայագիտական կենտրոնի, քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի հայցորդ Գառնիկ Դավթյանի «Հայաստանագիտությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» գրքի քննարկումը:

5. 2019թ. ապրիլին կազմակերպվել է Հայոց ցեղասպանության 104-ամյակին նվիրված գրքերի ցուցահանդես:

6. Առկա հայագիտական համացանցային նախագծերի հետ համագործակցության ապահովման շրջանակներում «Հայագգ» էլեկտրոնային հանրագիտարանում տեղադրվել է 157 անձանց վերաբերյալ կենսագրական տվյալներ, տեսանյութեր, լուսանկարներ (տարբեր կարգացուցակներով՝ բժիշկներ, գեներալ մայորներ, պետական գործիչներ, իրավաբաններ, ազատամարտիկներ:

7. 2019թ. հուլիսի 3-ին կենտրոնն իր մասնակցությունն է ցուցաբերել ԱրՊՀ պատմություն 3-րդ կուրսի «Դեպի Դիզակ» գիտարշավին, տրամադրվել է թեմային համապատասխան գրականություն՝ արշավի գիտականությունն ապահովելու համար:

8. Կենտրոնում գործում է հայագիտական ուղղվածությամբ էլեկտրոնային գրադարան, որը համալրվում է նոր գրականությամբ և պարբերականներով: Զուգահեռ կազմվում է քարտարան: Կենտրոնը օպերատիվորեն հաղորդակցվում է համաշխարհային գիտական նվաճումներին՝ օգտվելով անվճար էլեկտրոնային գրադարաններից:

9. Կենտրոնում շարունակական բնույթ է կրում Արցախի գյուղերի պատմությանը վերաբերող նյութերի հավաքագրումը:

Կենտրոնի գրադարանային ֆոնդը համալրվել է 65 կտոր գրականությամբ:

Կենտրոնի հաճախումների թիվը կազմում է 1358 ընթերցող, այլ բուհերից և շրջաններից՝ 19 ընթերցող:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Կազրամանյան Էրիկ Հենրիկի

2018-2019 ուսումնական տարում Հայ կրթական հիմնարկության և ՄԻԵՐ Զուլհաճեանի անվան համակարգչային լսարանները ապահովված էին 47 համակարգչով, մեկ տպիչ սարքով և երկու պրոյեկտորով, որոնց առկայությունը նպաստում է դասապրոցեսների բարձր մակարդակով անցկացմանը:

Լսարանները ապահովում են բնագիտության, տնտեսագիտության, պատմության և իրավագիտության, բանասիրական, մանկավարժության և սպորտի ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և հայցորդների համապատասխան ուսումնական պրոցեսները:

Լսարաններն ապահովված են համացանցի մալուխային կապով, (սեփական կամ համալսարանական) և ինտերնետից օգտվելու հնարավորություններ, նյութերի տպագրում, դասախոսների կողմից տրամադրված ուսումնական և այլ նյութերից օգտվելու հնարավորություն:

Մասնագիտական յուրաքանչյուր առարկայի համար կան համապատասխան ծրագրային փաթեթներ:

Կատարվում են լաբորատոր աշխատանքների թարմացումներ և անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնություն է ցուցաբերվում ուսանողներին: Կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքների կատարման համար ուսանողներին տրամադրվում են լրացուցիչ պարապմունքների գրաֆիկ:

Լսարաններում վերահսկվում են հակավիրուսային ծրագրերի թարմացման աշխատանքները: Վերացվում են համակարգչային տեխնիկայի ի հայտ եկած ծրագրային թերությունները: Հայտնաբերվում է վթարված համակարգչային տեխնիկայի խափանման պատճառը և ներկայացվում անհրաժեշտ առաջարկություն:

Լսարաններն ապահովում են ուսումնական պրոցեսին անհրաժեշտ սարքավորումներով /պրոյեկտոր, տեսախցիկ/։ Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցվում և ժամանակին վերացվում են։

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բաժնի պետ՝ Հարությունյան Հասմիկ Նիկոլայի

ԱրՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից 2018-2019 ուսումնական տարում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Գրադարանային ֆոնդը համալրվել է նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված 462 միավոր գրքով, 107 բրոշյուրով, 178 ամսագրով, 7 անուն թերթերով, որոնց ցանկը տեղադրվել է համալսարանի ներքին ցանցում։

2. Ամբիոններին կից կաբինետներին տրամադրվել է գրականություն՝ տացքը ակտիվացնելու նպատակով։

3. Սպասարկվել է 1888 ընթերցող, որից 1367-ը՝ ուսանող, 129-ը՝ մագիստրանտ, 5-ը՝ ասպիրանտ, 198-ը՝ դասախոս, 158-ը՝ աշխատող, 31-ը՝ այլ ընթերցող։

4. Գրադարանում գործել է 2 ընթերցասրահ, որտեղ ընթերցողներին են տրամադրել գրադարանում եղած գրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացված թերթերն ու ամսագրերը։

5. Պատրաստ և ներքին ցանցում տեղադրված է 2013 թվականից մինչև 2018 թվականը ԱրՊՀ-ում հրատարակված գիտական տեղեկագրերի հոդվածների մատենագիտական ցանկերը՝ հայերեն և ռուսերեն տարբերակով։ Էլեկտրոնային գրադարանում 2018-2019 ուսումնական տարում մուտքագրվել է 772 գիրք, օգտվել են 2370 ընթերցողներ։ Սկանավորվել, մշակվել և վերջնական էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 1998 թվականից մինչև 2010 թվականը ԱրՊՀ-ում հրատարակված գիտական տեղեկագրերը՝ թվով 21 գիրք։

6. Գործել են նոր ստացած գրականության ցուցադրական, «Մեր օրացույցը», «Օրվա պարբերականներ», «Տոն օրերին նվիրված», ինչպես նաև «Նշանավոր հոբելյարներ» ցուցատախտակները։

7. 2018թ. գրադարանը՝ որպես մշակութային կենտրոն, կազմակերպել է միջոցառումներ. Նոյեմբերի 5-ին՝ «Արվեստը կյանքի իմաստ» խորագրով, փետրվարի 20-ին՝ Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ, մարտի 1-ին՝ հանդիպում բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սոկրատ Խանյանի հետ, մարտի 21-ին՝ հանդիպում, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զինաիդա Բալայանի հետ։

ԱՐՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Արհկոմիտեի նախագահ՝ Մեծլումյան Կարեն Բորիսի

2018-2019 ուսումնական տարում տեղի է ունեցել արհեստակցական միության կոմիտեի կազմի փոփոխություն։ Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Արհմիության 34 անդամի ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն 30.000-50.000-ական ՀՀ դրամի չափով (առողջական խնդիրներ ունեցողներ).

2. Հոբելյանական տարեդարձների առթիվ 26 անդամի տրամադրվել է 10.000-ական ՀՀ դրամ.

3. Ամանորյա տոների կապակցությամբ արհմիության բոլոր անդամներին տրամադրվել է 4000-ական ՀՀ դրամ.

4. Մայրության և գեղեցկության տոն օրվա առթիվ ԱրՊՀ կոլեկտիվի կանանց և աղջիկներին տոնական անակնկալ է մատուցվել.

5. Եռատոնի առթիվ արհմիության 21 անդամների (գոհված ազատամարտիկների ընտանիքներ) տրամադրվել է 10.000-ական ՀՀ դրամ.

6. Կենսաթոշակի անցնելու կապակցությամբ արհմիության 4 անդամի տրամադրվել է 10.000-ական ՀՀ դրամ.

7. Ամառային հանգիստը կազմակերպելու նպատակով ընդունվել և բավարարվել են ստորաբաժանումների կողմից ներկայացված կոլեկտիվ հայտերը.

8. Ամառային փուլում ԱրՊՀ ստորաբաժանումների բնականոն աշխատանքը ապահովելու համար տրամադրվել են օդափոխիչներ.

2019 թ. ապրիլ ամսից արհմիության կոմիտեի աշխատանքները կատարվել են հասարակական հիմունքներով:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Բ.Գ.Թ. Զարինե Գարեգինի Սառաջյան

Բաժինը գործում է 2018 թվականից, մինչ այդ գործում էր Ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժինը:

Բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով:

Հանրային կապեր: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը, տեղեկատվական և քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, նպաստել հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնակրթական հաստատությունների հետ համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԱՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև տարբեր բուհերի ուսանողների հետ տարվող աշխատանքների, այլ կառույցների հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

Լրատվություն: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ ինտերնետային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթի, ԱրՊՀ մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել են տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում: Իրականացրել են «Արցախի համալսարան» և «Քո ժամանակը» թերթերի տարածումը ԱՀ, ՀՀ համապատասխան կառույցներում, համալսարանի ֆակուլտետներում և ստորաբաժանումներում: Պարբերաբար կատարվել են անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի տնօրենի պաշտոնակատար՝ Գասպարյան Անահիտ Էդուարդի

2018թ. հոկտեմբերի 5-ին մի խումբ ուսանողների, մագիստրանտների համար համագործակցության շրջանակներում կազմակերպվել է ճանաչողական այցելություն ք. Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոն:

2018թ. հոկտեմբերի 10-ին դոցենտ, հ.գ.թ. Լուսինե Ղարախանյանի նախաձեռնությամբ հոգեկան առողջության համաշխարհային օրվա կապակցությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում, որի նպատակն էր հասարակության ուշադրությունը հրավիրել հոգեկան առողջության հիմնախնդիրների վրա:

2018թ. նոյեմբերի 12-ին կազմակերպվել է բակալավրիատի ուսանողների և մագիստրանտների կամավորական խմբերի հանդիպում Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոնի աշխատակիցների հետ:

2018թ. նոյեմբերի 15-ին «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ, 4-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերի ուսանողների համար կազմակերպվել է քննարկում՝ «Միջանձնային կոնֆլիկտները ընտանիքում. մասնավորապես՝ ամուսինների միջև» թեմայով, որը վարել է հոգեբան, դոցենտ Ժենյա Սարգսյանը:

2018թ. նոյեմբերի 20-ին Սուսաննա Հայրապետյանի նախաձեռնությամբ լոգոպեդի մասնագիտական օրվա կապակցությամբ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են գիտագործնական ընթերցումներ:

2018թ. նոյեմբերի 22-ին հոգեբանի օրվա կապակցությամբ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հետ համատեղ բակալավրիատի «Հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպվել է այցելություն Ստեփանակերտի Վ. Զհանգիրյանի անվան N11 ավագ դպրոց, հանդես են եկել ընթերցումներով, որի նպատակն էր ընդհանուր հոգեբանական գիտելիքներ հաղորդել ավագ դպրոցի աշակերտներին, նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

2018թ. նոյեմբերի 26-ից 30-ը ԱրՊՀ և ՊՆ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է սպա-հոգեբանների վերապատրաստման հնգօրյա դասընթաց:

2018թ. դեկտեմբերի 17-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի բացման տարեդարձին:

2019թ. փետրվարի 4-ից մինչև 8-ը կազմակերպվել է սպա-հոգեբանների վերապատրաստման հերթական հավաք-դասընթաց:

2019թ. փետրվարի 6-ին ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպվել է այցելություն ՊԲ զորամասերից մեկը, որտեղ ծանոթացել են զորամասում գործող հոգեբանական օգնության կենտրոնի աշխատանքներին և բաժիններին:

2019թ. փետրվարի 11-ին սպասարկման ոլորտի աշխատողների համար կազմակերպվել է «Միջանձնային հարաբերությունների զարգացում» թեմայով թրեյնինգ, որը վարել է հ.գ.թ., դոցենտ Լուսինե Ղարախանյանը:

2019թ. փետրվարի 14-ին բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպվել է ճանաչողական այցելություն ք. Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոն:

2019թ. փետրվարի 22-ին «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել է բաց դասախոսություն՝ «Ուսանողների տարիքային առանձնահատկությունները և բուհական գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրները» թեմայով, որը վարել է հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը:

2019թ. փետրվարի 26-ին կազմակերպվել է հանդիպում ք. Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան N11 դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների հետ: Հանդիպման ընթացքում աշակերտները հնարավորություն ունեցան ծանոթանալու բուհական ընդունելությունների կարգին, մասնագիտությունների ցանկին: Առանձին զրույցի թեմա էր մասնագիտական կողմնորոշման հարցը, հատկապես մանկավարժական մասնագիտությունների կարևորման խնդիրը, նաև բուհական ուսումնառության ընթացքում ուսանողներին ընձեռվող հնարավորությունները:

2019թ. մարտի 2-ին բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների (փորձուսուցման մանկավարժ-հոգեբան Ժենյա Սարգսյան) և Խ. Աբովյանի անվան N1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ «Մի քիչ հոգեբանությունից» խորագրով:

2019թ. մարտի 11-ից մինչև 15-ը ՀՀ-ից հրավիրված պրակտիկ հոգեբան Արմինե Ադամյանի կողմից ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում անց են կացվել դասընթաց և թրեյնինգ, որոնք նախատեսված էին ԱրՊՀ ուսանողների և հոգեբանության խնդիրներով հետաքրքրված մասնագետների համար:

2019թ. մարտի 12-ից մինչև 15-ը կազմակերպվել են դասընթացներ կրթության համակարգի մասնագետների համար:

2019թ. մարտի 13 «Ցավի կառավարում» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել Բ.Գ.Թ., բժշկ-նյարդաբան, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման առողջապահական միության նախագահ Ավետիս Ավետիսյանը:

2019թ. ապրիլի 15-ին Արմինե Ավանեսյանի կողմից «Անզրկելի լեզու և գրականություն-1», «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությունների 1-ին կուրսերի ուսանողների համար կազմակերպվել է բաց դասախոսություն «Սթրես» թեմայով:

2019թ. ապրիլի 15-ից մինչև 19-ը հոգեբանական դասընթացներ է վարել ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Անահիտ Սահակյանը:

2019թ. ապրիլի 14-ից մինչև 20-ը ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի զարգացման ծրագրով նախատեսված, ուսանողների պարբերական վերապատրաստման նպատակով, մի խումբ ուսանողներ մեկնել են ք. Երևան՝ ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում կազմակերպվող պրակտիկ դասընթացներին մասնակցելու համար:

2019թ. ապրիլի 25-ին ուսանողների հետ հանդիպել է Բ.Գ.Թ., բժշկ-նյարդաբան Ավետիսյանը՝ հանդես գալով «Անձնային աճ» թեմայով դասախոսությամբ:

2019թ. ապրիլի 29-ից մինչև մայիսի 3-ը մի խումբ ուսանողներ մեկնել են ք. Երևանի «Անիմա» հոգեբանական կենտրոն՝ դասընթացներին մասնակցելու նպատակով:

2019թ. ապրիլի 30-ին ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ու հոգեբանական կենտրոնի համատեղ ուժերով կազմակերպվել է կլոր-սեղան «Ցեղասպանությունը կրթության ոլորտի համատեքստում» թեմայով՝ նվիրված հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցին:

2019թ. մայիսի 26-ին, ԱրՊՀ-ում հյուրընկալվել և վարպետության դասեր են անցկացրել ՀՀ-ում գործող «Ժեստ» հոգեբանական կենտրոնի մասնագետները՝ սկիզբ դնելով նոր համագործակցության:

2019թ. հունիսի 14-ին մանկավարժության և սպորտի ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար Արմինե Ավանեսյանի կողմից կազմակերպվել է բաց դասախոսություն «Ուսումնական գնահատականի ազդեցությունը սովորողների ինքնագնահատականի ձևավորման վրա» թեմայով:

2019թ. հունիսի 28-ին պրակտիկ հոգեբան Անի Աբրահամյանը ուսանողների, մագիստրանտների համար անց է կացրել գործնական պարապմունք՝ «Հոգեբանական մանիպուլյացիա» թեմայով:

2019թ. հուլիսի 6-ին ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ., դոցենտ Լևոն Սարգսյանը անց է կացրել գործնական պարապմունք՝ «Հոգեբանական խորհրդատվության հիմունքները» թեմայով:

2019թ. հուլիսի 16-ին պրակտիկ հոգեբան Անի Աբրահամյանը հանդես է եկել «Պատասխանատվություն» թեմայով դասախոսությամբ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Խաչատրյան Դիանա Լևոնի

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը /ՈւԽ/ գործունեությունը իրականացնում է իր Կանոնադրությանը համապատասխան՝ ակտիվորեն համագործակցելով ՈւՇՀՀՏԱԳ պրո-ռեկտորի, ՈւՀՏԱ և Կարիերայի բաժնի, ԱրՊՀ այլ ստորաբաժանումների հետ:

Ուսանողական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա հաշվետվությունը կազմված է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների /ՖՈՒԽ/ հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում զգալի աշխտանքներ են կատարվել ուսանողների ուսումնագիտական գործունեությունն ու ակտիվ ստեղծագործական կյանքը բովանդակալից դարձնելու ուղղությամբ, կազմակերպվել են բազմաթիվ ուսումնական, մարզամշակութային և ժամանցային միջոցառումներ, որոնց մասնակցել են մեծ թվով ուսանողներ:

Կարևոր միջոցառումներից են պարբերական հանդիպումներն ու քննարկումները, որոնցից կարելի է առանձնացնել ԱրՊՀ ՈւԽ և ՖՈՒԽ-երի ներկայացուցիչների հանդիպումները ԱրՊՀ ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվել և իրենց լուծումներն են ստացել ուսանողական կարևոր հարցեր:

Ուսումնական տարվա սկզբին՝ առաջին կուրսեցիների երդման արարողությունից հետո, բոլոր ֆակուլտետների ՖՈՒԽ-երը կազմակերպել են ծանոթության երեկոներ՝ նպատակ ունենալով ավագ կուրսեցիների փորձն ու օրինակը ճանաչելի դարձնել: ՖՈՒԽ-երի կողմից բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են նաև ինտելեկտուալ խաղեր, որոնց հաջորդել է միջֆակուլտետային փուլը:

Հոկտեմբերի 10-ին ԱրՊՀ ՈւՀՏԱ և Կարիերայի բաժնի և ՈւԽ համատեղ գործակցությամբ տեղի ունեցավ ֆիլմի ցուցադրություն:

Հոկտեմբերի 26-ին ճանաչողական այցով ԱրՊՀ-ում էր Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողական խորհրդի պատվիրակությունը: ԱրՊՀ ուսանողական կառույցի անդամները դիմավորել և հյուրընկալել են գործընկեր բուհի պատվիրակությանը, ծանոթացրել առկա պայմաններին և ուսանողական առօրյային:

Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ: ԱրՊՀ ՆԶՊ և ՖԴ ամբիոնի և ՈւԽ համատեղ ջանքերով կազմակերպվել է հրաձգության մրցույթ, որին մասնակցել են 5 ֆակուլտետներից հավաքական թիմեր, որոնք մրցել են խմբային ու անհատական մրցապայքարում:

Նոյեմբերի 8-ին և 9-ին ՈւԽ նախաձեռնությամբ կազմակերպվել է շախմատի համալսարանական մրցույթ:

Հաջորդ նախաձեռնությունը միտված էր հանրակացարանաբնակ ուսանողների առօրյայի աշխուժացմանը: Հանրակացարանի բակում կազմակերպվել է միջոցառում, որի ընթացքում ուսանողները խարույկի շուրջ հանդես են եկել ազգագրական երգ ու պարով, կազմակերպվել են մշակութաժամանցային խաղ-մրցույթեր:

Նոյեմբերի 15-ին ՈւԽ և ՈւԳՀ համատեղ նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղ, որին մասնակցել են բուհի բոլոր ֆակուլտետները ներկայացնող թիմեր:

Նոյեմբերի 16-ին ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանի հրամանով պատվոգրերով գովասանագրերով, շնորհակալագրերով, դրամական պարգևներով և գրքերով խրախուսվել են ուսանողության օրվա կապակցությամբ կազմակերպված մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողները, ուսումնական, գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած, մարզական նշանակալի ձեռքբերումներով առանձնացած, ինչպես նաև ըստ մասնագիտությունների բարձր ուսումնական առաջադիմություն և պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողները: ԱրՊՀ ղեկավարության նախաձեռնությամբ նոյեմբերի 16-ին ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ ընդունել է մի խումբ ուսանողների:

ԱրՊՀ ուսանողները նոյեմբերի 24-25-ը մասնակցել են ՀՊՏՀ ՈւԽ նախաձեռնությամբ կազմակերպված «Crosskil» միջբուհական ուսանողական աշխատաժողովին:

Ուսանողների միջազգային օրվա առթիվ ՈւԽ նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ 20-ին, 21-ին և 29-ին ԱրՊՀ շուրջ 450 ուսանողի հնարավորություն է տրվել դիտելու թատերական ներկայացումներ:

Դեկտեմբերի 11-ին ԱրՊՀ մի խումբ ուսանողների հետ ունեցած հանդիպման ընթացքում ուսումնական գործընթացը կարգավորող ստորաբաժանումների ղեկավարները պատասխանել են ուսանողական ակտիվի հարցերին և պարզաբանել որոշ խնդիրներ:

Ամանորին ընդառաջ՝ դեկտեմբերի 21-ին մի խումբ ուսանողներ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտորի գլխավորությամբ այցելել են Բերձորի N2 գիշերօթիկ հաստատություն:

Ուսանողական խորհուրդն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև քննաշրջանի ընթացքը պատշաճ կազմակերպելու գործում:

Հունվարին հանդիպում է կազմակերպվել հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր, ինչպես նաև նրանց կողմից բարձրացված խնդիրների տրվել են համապատասխան լուծումներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորությունը միշտ էլ գերակայել է ՈւԽ որդեգրած գործելաոճում:

Բուհ-բանակ կապի ամրապնդման նպատակով Հայրենյաց պաշտպանի տոնին ընդառաջ Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվել է համերգ, որին հայրենասիրական-ազգագրական կատարումներով հանդես են եկել ԱրՊՀ ուսանողները և ՊԲ «Ասպետ» համույթը:

Ուսանողական խորհրդի կողմից տարվա ընթացքում մի քանի անգամ այցելություններ են կատարվել տարբեր գործառնություններ և ծանրոցներ հղվել առաջնագծի զինվորներին:

Փետրվարի 11-ին ԱրՊՀ ռեկտոր Ա. Սարգսյանը հանդիպում է ունեցել ուսանողական կառույցի ներկայացուցիչների հետ, քննարկել ընթացիկ և նախատեսվող մի շարք աշխատանքներ:

Փետրվարի 13-ին ՈւԽ նախաձեռնությամբ նշվել է Տյառնընդառաջը, որին մասնակցել է նաև Արցախի հերոս Զորի Բալայանը:

Մարտի 8-ին ԱՀ մշակույթի և երիտասարդության պալատում տեղի է ունեցել Հումորի լիգայի Արցախի գավաթը, որտեղ 1-ին տեղ է զբաղեցրել Արցախի պետական համալսարանի թիմը:

Ապրիլյան պատերազմին նվիրված կազմակերպվել է մեծարման ցերեկույթ, որի ընթացքում արժևորվել է պատերազմին մասնակցած ԱրՊՀ ուսանողների սխրանքը և հարգանքի տուրք մատուցվել հավերժի ճամփորդ դարձած ուսանողների հիշատակին:

Ապրիլին կազմակերպվել է կամավորական հանգանակություն՝ Անի Մխիթարյանի վիրահատության համար:

Ապրիլի 23-ին երեկոյան Ստեփանակերտում տեղի ունեցած ջահերթին և մոմավառությանը մասնակցել են նաև ԱրՊՀ ուսանողները:

Ապրիլի 11-13-ը ՈւՆ նախաձեռնությամբ կազմակերպվել է միջֆակուլտետային ֆուտբոլի առաջնություն, որտեղ հաղթող է ճանաչվել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի թիմը:

Ապրիլի 29-ին ՈւՆ նախաձեռնությամբ տղաների միջև մեկնարկել է միջֆակուլտետային վոլեյբոլի մրցույթը:

Մայիսի 1-5-ը ԱրՊՀ ՈւՆ անդամները մասնակցել են ՀՊՏՀ ՈւՆ 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպված «Հայրենասեր ուսանող» ֆորումին:

ՈւՆ նախաձեռնությամբ մայիսի 13-ին և 14-ին անց է կացվել միջֆակուլտետային ֆուտբոլի մրցույթ, և հաղթող թիմն արժանացել է «ԱրՊՀ գավաթ» մրցանակին:

ԱրՊՀ-ում գործում է նաև «Ես կամավոր» եմ ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են համալսարանական և արտահամալսարանական մի շարք շաբաթօրյակներ, նկարահանվել է սոցիալական տեսահոլովակ:

Ընթացիկ տարում կազմակերպվել են մի շարք երթեր, էքսկուրսիաներ, արշավներ:

Ուսանողական խորհրդի ուշադրության առանցքում է եղել սոցիալապես անապահով, ինչպես նաև հանրակացարանաբնակ ուսանողների խնդիրները: Ուսման վարձավճարի զեղչման տեսքով նյութական օգնություն են ստացել տասնյակ ուսանողներ:

ՈւՆ մշտական հանձնաժողովները որոշակի աշխատանքներ են կատարել իրենց վստահված ուղղություններով:

Ուսանողական ամառը նույնպես հետաքրքիր է անցել: ԱրՊՀ ուսանողները մասնակցել են ոչ միայն գործընկեր բուհերի, այլ նաև պետական կառույցների առաջարկած ամառային հավաքներին:

Օգոստոսին ԱրՊՀ կողմից կազմակերպվել է ամառային միջազգային ճամբար, որին մասնակցել են նաև գործընկեր բուհերի ուսանողները:

Ուսանողական խորհուրդն ակտիվ համագործակցել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության, Արցախում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր բուհերի ինքնավար կառույցների հետ:

Հաշվետու ուսումնական տարում ավելացել է ակտիվ ուսանողների քանակը:

Վերոնշյալ բոլոր միջոցառումներին մեծապես աջակցել է ՈւՀՏԱ և Կարիերայի բաժինը, ինչպես նաև համալսարանի ղեկավարությունը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Մեծղումյան Կարեն Բորիսի

ԱրՊՀ-ում ուսանողների ապագա մասնագիտական առաջընթացային խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համակարգումն իրականացվում է 2018 թ. ստեղծված ԱրՊՀ ՈՒՀՏԱ և կարիերայի բաժնի կողմից (career.asu.am):

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Տարբեր թեմատիկ սեմինար-դասընթացներ, խորհրդատվություններ, ուսումնական ծրագրով չնախատեսված լրացուցիչ պրակտիկաների և ինթերշիփ ծրագրերի (ստաժավորման) ու կամավորական աշխատանքների կազմակերպում.

2. Ձեռնարկությունների հետ համագործակցության ձևավորում (հանդիպումներ, խորհրդակցություններ, ընդունելություններ).

3. Տարբեր թիրախային խմբերի հետ կապերի ամրապնդում (ինտերնետ կայքի ստեղծում և շահագործում).

4. Ֆակուլտետներում կարիերայի հարցերով պատասխանատուների ինստիտուտի ներդրում (մեթոդիստներ):

Բաժինը իր ստեղծման օրվանից լծվել է շրջանավարտների կոնտակտային տվյալների բազայի ստեղծման աշխատանքներին (շրջանավարտների գրանցման թերթիկի միջոցով):

Բաժնի կողմից կազմակերպվել են դասընթացներ.

- Ուսանողների գործարարական հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների շրջանակում հանդիպում Հայաստանի ամերիկյան համալսարանի ներկայացուցիչների հետ: Ծրագրի նպատակն էր աջակցել Արցախի գյուղական համայնքների կայուն տնտեսական զարգացմանը և աշխատատեղերի ստեղծմանը:

- «Կառուցի՛ր քո հաջողակ կարիերան» և «Հարցազրույցին մասնակցելու ունակություններ» թեմաներով սեմինար-դասընթացներ, որոնք վարել են Հայաստանի ամերիկյան համալսարանի փորձագետներ Նանա Հովհաննիսյանը և Արտակ Ալոյանը: Դասընթաց-սեմինարը մասնակիցներին հնարավորություն է տրվել քննարկելու և ձեռք բերելու աշխատաշուկայի համար այն հմտությունները, որոնք ակնկալում են գործատուները: Դասընթացի ընթացքում ներկայացվել են աշխատանքի տեղավորման հիմնական բաղադրիչները:

- Նախանշվել են ԲՈՒՀ-գործատու նոր համագործակցության հնարավորություններ: Տեղի է ունեցել հանդիպում ԱրՊՀ ռեկտորի և «Ղարաբաղ տելեկոմ» ՓԲԸ ներկայացուցիչների հետ, քննարկվել են համագործակցությանն առնչվող հարցեր:

- Բաժինը կազմակերպել է հանդիպում Բնսթիգեյթ Մոբայլ» ընկերության ներկայացուցիչների հետ: Ծրագրավորմամբ հետաքրքրված ուսանողները ծանոթանացել են ընկերության գործունեությանն ու Ստեփանակերտում կազմակերպվելիք ծրագրավորման դասընթացներին:

- Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցն իր թիմով կազմակերպել է Արցախի Հանրապետության երիտասարդության համար թրեյնինգ՝ «Առաջնորդության գիտակցում և հաջողության մոդելավորում» թեմայով, որին մասնակցել են ԱրՊՀ մի խումբ ուսանողներ: Թրեյնինգը վարել է առաջնորդության միջազգային դպրոցի հիմնադիր և ղեկավար, Միլիկոնյան հովտի հավաստագրված քոուչ, Win2Win Communication կազմակերպության HRD տնօրեն Ռուզաննա Աթասունցը: Ծրագրի շրջանակներում դասախոսություններին հաջորդել են

գործնական պարապմունքներ՝ ուղղված լիդերության, երջանկության բացահայտմանը և գիտակցմանը:

- ԱրՊՀ-ում հյուրընկալվել և ուսանողների հետ հանդիպում է ունեցել «Vartanush Grandma» զբոսաշրջային գործակալության հիմնադիր Ամալյա Ակոպովան:

Բանախոսը ուսանողների հետ զրույցի ձևաչափով փորձել է առանձնացնել Արցախի զբոսաշրջային առանձնահատկությունները՝ միաժամանակ սովորեցնելով, թե ինչպես կարելի է դրանց կիրառմամբ ներգրավել առավելագույն զբոսաշրջիկների և երկիրը դարձնել առավել ճանաչելի՝ միաժամանակ նպաստելով ուսանողների կարիերայի զարգացմանը:

- Կայացել է հանդիպում «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի պատասխանատուների հետ, որի ընթացքում պատասխանատուները ներկայացրել են հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը և հանդես եկել թիմը ԱրՊՀ շրջանավարտներով համալրելու առաջարկությամբ:

- Բաժինը կազմակերպել է դասախոսություն-քննարկում՝ «Հանրային կարծիքի ուսումնասիրության կարևորությունն ու չափման մեթոդները» թեմայով, որը վարել է «Breavis» խորհրդատվական ընկերության հետազոտությունների բաժնի ղեկավար Հասմիկ Առաքելյանը:

- Բաժինը ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության «Երիտասարդների հնարավորությունների ակումբ» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել է «Գրագետ CV կազմելու և միջազգային ծրագրերին դիմելու գաղտնիքները» թեմայով դասընթաց: Կազմակերպության հիմնադիր-նախագահ Տիգրան Ավագյանը ուսանողներին ծանոթացրել է միջազգային դասընթացներին և թրեյնինգներին մասնակցելու երիտասարդական ծրագրերին, ներկայացրել ինքնակենսագրական (CV) գրելու հմտությունները և տարածված սխալները:

Բաժինը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ընդունվել և ընթացքավորվել են ուսանողական հանրակացարանում բնակվելու համար ներկայացված դիմումները.

2. Կազմակերպվել են հանդիպումներ առաջին կուրսեցիների հետ, կատարվել են իրազեկման աշխատանքներ.

3. Կատարվել է ուսանողների խնդիրների վերհանում և ներկայացվել ԱրՊՀ ղեկավարությանը.

4. Կատարվել են ուսանողների հասարակական ակտիվության միավորների հաշվարկում և կառավարում:

Միջոցառումներ

1. Ամառային միջազգային ճամբարի կազմակերպում՝ ՀՀ, ԱՀ, արտերկրի բուհերի ուսանողների մասնակցությամբ:

2. Արիության դաս՝ նվիրված Արցախի անկախության օրվան:

3. Առաջին կուրսեցիների երդման արարողության կազմակերպում, տեսահոլովակի նկարահանում:

4. «Պահպանենք բնությունը» թեմայով կամավորական աշխատանքներ Ստեփանակերտի տարածքում, տեսահոլովակի նկարահանում:

5. Ուսանողների միջազգային օրվան նվիրված մրցույթների և միջոցառումների կազմակերպում:

6. Այցելություն գորամասեր, համերգային ծրագրեր:

7. «Հումորի լիգա» արցախյան գավաթի մասնակցություն, առաջին տեղ:

8. Հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար համերգային ծրագիր:

9. Կամավորական խմբերի կազմավորում, աշխատանքներ Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնում, Starkey Hearing Foundation կազմակերպության ծրագրերում, CONIFA մրցաշարում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ Գասպարյան Աննա Լավրենտի

Առաջնորդվելով 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքների ծրագրով՝ ՈւԳԸ-ն ակտիվորեն աշխատանքներ է տարել մի շարք ուղղություններով.

1. Նոյեմբերի 15-ին Ուսանողության միջազգային օրվա առթիվ ՈւԽ և ՈւԳԸ համատեղ աշխատանքների միջոցով կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ ֆակուլտետների միջև:

2. Տարվել են աշխատանքներ Վանաձորի պետական պամալսարանում 2018թ. նոյեմբերի 6-ին կայանալիք գիտական նստաշրջանին ԱրՊՀ ուսանողության մասնակցությունն ապահովելու համար:

3. 2019 թվականի մարտի 6-13-ը ֆակուլտետներում կազմակերպվել են սեմինար-դասընթացներ՝ «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով: Հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները սեմինար-դասընթացները կազմակերպվել էին ֆակուլտետներում առանձին-առանձին և ունեին ճանաչողական նշանակություն:

4. 2019թ. ապրիլի 26-30-ը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում տեղի ունեցած ուսանողական գիտաժողովին մասնակցել են ԱրՊՀ ուսանողները, տարվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ:

5. Մայիս ամսից Ստեփանակերտի վիքիակումբի և ՈւԳԸ համագործակցության շրջանակներում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողները այցելում են վիքիակումբ, որտեղ սովորում են գրել և մշակել հոդվածներ: Համագործակցությունը շարունակական բնույթ կկրի և կներառվեն նաև մյուս ֆակուլտետները:

6. Իրականացվել են բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ 2019թ. նոյեմբերի 3-5-ը ԱրՊՀ-ում կայանալիք ուսանողական գիտաժողովի կազմակերպման համար՝ նվիրված Արցախի պետական համալսարանի 50-ամյակին:

ԲՈՒԺԿԵՏ

Վարիչ՝ Պետրոսյան Ռոմելլա Զինավուրի

2018-2019 ուսումնական տարում բուժկեստ են հաճախել 2726 մարդ, որից 2186-ը՝ աշխատող և 540-ը՝ ուսանող: Հաճախողների թիվը 2017-2018 ուսումնական տարվա համեմատ նվազել է 53-ով: 2019թ-ի մարտ ամսին ՀՀ «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպվել է դոնորագրում, որին ԱրՊՀ-ից մասնակցել են 133 աշխատող և ուսանող:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծավալը 19,5 տպ. մամուլ: Տպարանակ 100:

Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ.՝ (0749) 4-04-91, ֆաքս՝ (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am

Арцахский государственный университет
г. Степанакерт, ул. Мхитара Гюша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АргУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am

Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am